

21029

ԻՆՔՆԱԶԱՐԳԱՑՄԱՆ

Ն. ԲԱՍԿԻՆ

Դհ 2 68 Ոհ 38

Պոխագր. 2. ՊԵՏՐՈՎԱՆ

374

Բ-31

374
p.31

Գրուետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

ՀԱՅԻՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆՔ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ՑԵՎ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Բ. 4.

1. Ա. Լազովսկի. — «Հոսանքների պայքարը համաշռարհային արշարժման մեջ», (սպառված)	
2. « Արհմիությունների խնդիրներն ու գործելակերպնը», (սպառված)	
3. Ե յ գ ու ս. — «Ակնորկներ Արևելքի բանվորական շարժման մասին» (սպառված)	
4. Ա. Կ — Ա. 6. — «Բանվ. շարժման պատմ. Անգլիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում» (մետքել են սակավաթիվ որինակներ)	
5. «Գործարկութների և տեղկութների ուղեցույց»	1
6. «Աշխատանքի որերքիրք»	15
7. Ա. Անուշկին. — «Պրոֆեսիոնալ շարժումն Ռուսաստանում» (մնացել են սակավաթիվ որինակներ)	
8. Ա. Անուշկին. — «Գործարկութների և տեղկութների անելիքները ներկա պայմաններում»	25
9. Գուրեմփի. — «Լենինը և արհմիությունները»	50
10. Ֆաբրիկատ. — «Սոցիալական արահովազրությունը», (Սպառված)	
11. Տ ե ս ե ր ի 6. — «Ի՞նչ ե արհմիության կանոնադրությունը»	25
12. Սակերանուկի. — «Ի՞նչ պետք է իմանա ամեն մի մայր»	20
13. Բ ե խովսկի. — «Բանվորների և ծառայողների ապահովագրությունը հաշմանդամության դեպքում», (սպառված)	
14. «Կանոնադրություն բանվորական գրադարանի»	15
15. Տ ե կ ի 6. — «Ակնարկներ բանվորական շարժման ոլամությունից»	35
16. Բ ժ. Մ ե լի բ յ ա ն. — «Սիֆիլիս»	20
17. Բ ժ. Կ ա ր ա պ ե ր յ ա ն. — «Մալարիա»	5
18. «Յերեք ինտերնացիոնալ», (սպառված)	
19. Գ ի ր ի 6 ի ս. — «Ի՞նչ ե արհմատակցական արտադրության միությունը»	20
20. Գ ի բ ե ն գ ե կ ի. — «Աշխատանքի հաշմանդամների ոլամությունը»	20

Մ. ԲԱՍԿԻՆ

ԻՆՔՆԱԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Փոխադր. Հ. ՊԵՏՐՈՎՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՀԵՇԽՈՒՅՆ ԵՐԱՄԻՋԻԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀԻ № 52

ՅԵՐԵՎԱՆ

1926 թ.

2010

13634

ԵՆԳԵՐՆԵՐ

- Պայմառի լեզ հաղթանակի նույնը, զինվե՛ք գիտելիքներով.
 - Մարդկությունը սփորել է ինչնուսի պես.
Գիտության համբան — ինչնազարդացումն է.
 - Գիտությունը բուժուազիայի ձեռքում՝
սուկացման գործիք է.
 - Գիտությունը պրոլետարիատի ձեռքում՝
ազատագրման մի սույն է.



7135-57

ՀԱՅՊԱԼԻԳՐԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Громк. 801 м. высота. 5200 мбр. 1000

ԳԼՈՒԽ ԱՐԱՋԻՆ

§ 1. Ի՞նՉ Ե ԻՆՔՆԱԶԱՐԴԱՑՈՒՄԸ

Ինքնազարդացմամբ պարապել, նշանակում է, ուսուցչի ոգնության, ինքնուրույն կերպով, ուսումնասիրել վորեե հարց։ Յենթագրենք յես ուզում եմ ուսումնասիրել Ս.Խ.Հ.Մ. տնտեսական աշխարհուղբությունը, այսինքն, իմանալ՝ Խորհրդային Միության արդյունաբերությունը, յերկրի հանքերը, և այլն։

Մի միջոցն է, գնալ համապատասխան գպրոց և սովորել տնտեսական աշխարհագրություն։ Մյուս միջոցն էլ այն է, վերցնել և ինքնուրույն կերպով, տնտեսական աշխարհագրություն ուսումնասիրել։

Յեթե այս յերկու միջոցներն ել լավ քննենք, կտեսնենք, վոր գպրոց գնալին այնքան ել հեշտ չի։ Նախ, արևատեսական աշխարհագրության հատուկ գպրոցներ չկան, յերկրորդ, յեթե յես ընդունվեմ մեր գպրոցներից վորեն մեկը, չեմ հասնի իմ նպատակին, վորովհետեւ գպրոցում ավանդում են բազմաթիվ տուարկաներ, վորոնց շարքում, շատ քիչ տեղ և տրված ինձ հետաքրքրուղ տնտեսական աշխարհագրությանը։

Հետո, ամեն մարդ չի կարող՝ գպրոց կտմ կուրսեր դնարաւ հարմարություններ ունենալ։

Մեր գպրոցների ու կուրսերի թիվն ել այնքան քիչ է, վոր շատ քչերն են բազզ ունենում սովորել։

Այսպիսով, չենց կյանքն ինքը, համոզաւմ ե մեզ,

Վոր դպրոցի միջոցով շատ բան չենք կարող անել, դրագով չպիտի սահմանափակվել:

Ուրեմն, պիտի դիմենք ինքնազարգացման միջոցին:

Ահա, յես ուսումնասիրում եմ Խ.Ս.Հ.Մ. անտեսական աշխարհագրությունը, առանց ուսուցչի:

—Դուք հարց կտաք. «Բան գուրս ե զալի՞ս, թե չե»:
—Այո, շատ բան եմ սովորել:

Դուք ժպատո՞ւմ եք, մտածո՞ւմ, թե անտեսական աշխարհագրությունը շատ հեշտ է, զբան համար ե ինձ հաջողվել ուսումնասիրել:

Յերեկ ել մի բանվոր ինձ հետ վիճելիս ասաց. «Փորձեք ուսումնասիրել մատեմատիկան, վոր թվերի ու դժվարին խնդիրների մի առարկա յե: Վոչ մի դադդիանի բանվոր կամ գյուղացի, ինքնուրույն կերպով չի կարող գտ ուսումնասիրել: Նրանք սովոր չեն, ինքնուրույն կերպով չեն կարող գրքից բան սովորել. ինքնազարգացումը ցնորք է, ուրիշ վոչինչ»:

—Ի՞նչ պատասխանելի այսպիսի անտեղյակ մարդուն:

—Ասացի, վոր ինքնազարգացումը ցնորք չե, այլ իսկական ճշմարտություն:

—Ինկեր սիրելիս, այս բանը հաստատում է, չենց ինքը կյանքը: Շատ ու շատ ինքնուս բանվորներ նույնպես գյուղացիներ կան, վորոնք վոչ մի զպրոցում չեն սովորել, բայց իրենց պատրաստությումը ամենահայտնի մասնագետներից ել անց են:

Որինակ բերենք մեր հին հեղափոխականներին ու ավագ ընկերներին: Յերկար տարիներ, փակված լինելով բանտերում, նրանք ուսումնասիրում եյին ամենազրժագրին գիտական հարցերը, բանտից գուրս գտված նրանք ամենազարգացած մարդիկն եյին, հաճախ մի կում մի քանի ոտար լեզուներ եյին սովորած լինում:

Վերցրեք ամենահայտնի գիտնականներին, միեւնույնական նրանցից շատերը ճիշտ ե սովորել են զրոյացներում, բայց նրանք իրենց հիմնական պատրաստությունը վոչ թե դպրոցական նստարանի վրա յեն ձեռքբերել, այլ ինքնուրույն աշխատանքի, սեփական յեսանդի շնորհիվ:

—Ահա փաստեր.

Համաշխարհային պրոլետարիատի յերկու մեծ ղեկավարները —կարև Մարքսն ու Լենինը:

Կարև Մարքսը յերկու ուսումնարան և ավարտել գիմնազիան և համարտարանը: Բյաց չպիտի կարծել, թե հայտնի մտածողը, այդ ուսումնարաններում և իր զիտությունը ձեռք բերել:

Մարքսի կենսագիր Ֆր. Մերինգը գրում է. «Դեռ համարականում, նա աշխատում եր ինքնուրույն. յերկու սեմեստրում (վեցամյակ) այնքան գիտելիք ամբարեց, վորքանչեր կարելի քսան սեմեստրի ընթացքում յուրացնել, յեթե ուսումնական կերակրով բավականանար և փոքրիկ բաժիններով դաստիումներ լսեր»:

Իր ամբողջ կյանքի ընթացքում, Մարքսը կարողացավ հեղափոխական ու քաղաքական պայքարի կողքին առնել և ինքնազարգացման աշխատանքներ:

Մարքսը միայն ինքնուրույն աշխատանքների շնորհիք ե գտնել աշխարհի ամենազարգացած մարդկանցից մեկը:

Ներքեվում ըերված որինակը պատմական փառա է:

Մի անգամ, իր աղջկա հարցին, թե «Ի՞նչն ե քո ամենասիրած զբաղմունքը», Մարքսը պատմախանեց. «Քրքեր քրքրելը»:

Ընթերցանությունն ու կարդալը, Մարքսի ամենասիրած բավականությունն եր: Մինչև իսկ մահը Մարքսը սին գտավ զբանեղանի առաջ. նա մեռավ իր բազկաթուի վրա:

Նույնը պետք է առել, նաև Լենինի մասին։ Վլադիմիր իլիչն իր ամբողջ կյանքում պարապել է ինքնազարդացմամբ։ Նույնիսկ կարողանում եր ամենագժվարին ու ծանր ժամանակներում և՝ աշխատել և՝ գիրք կարդալ։ Սրանով պիտի բացարել, վոր Լենինը վոչ միայն բանվորական շարժման խոշորագույն պրակտիկն եր ու կաղմակերպիչը, այլ և խոշորագույն գիտնական եր և ակուբան։

Աչտ գիտության այս հոկածարավոր, վոր կար մեր մեծ զեկավարների մեջ, մեր մեջ ել պիտի զարգացնել։

Ինքնազարդացումը նոր գյուտ չե, կամ անփորձ մի միջոց։ Հազարավոր տարիներ և, ինչ նույնություն ունի։ Նա շատ հին է, հազարավոր տարիներ և, ինչ նրանից սպավում են՝ միլիոնավոր մարդիկ՝ սկսած «միջակից» վերջացը ամենամեծ գիտնականներն ու մատուցողները։ Շատերը ժամանակ են, վոր ինքնազարդացումը պիտի փոխարինե դպրոցին։ Ի հարկե, դա սիսակ է։ Դպրոցն իր գերն ունի, ինքնազարդացումը՝ իրենը։

Ինքնազարդացումը լրացնում և դպրոցին, խորացնում դպրոցի տվածքը, լազմացնում դպրոցի զցոծ սերմերը։

Ինքնազարդացումը նույն դպրոցին և՝ տանը, տուանցի։

Հ 2. ԻՆՔՆԱԶԱՐԴԱՑՈՒՄԱՆ ՀԻՄՔՆ—ԱՇԽԱԲԵՇԱՅԱՑՈՒՄ ՔԻ ՄՇԱԿՈՒՄՆԵՐՆ Ե

Ինքնազարդացման նպատակը յերկու լի. 1) բանվորին կամ գյուղացուն ծանոթացնել վորեւ տասնամբին հարցի հետ, որինակ՝ առվորեցնել՝ կար ու ձե, կերպուրներ յեփել, հաշվառական թշնամին և այլն, և 2) բնդ հանուր ճշգրիտ գաղափար տալ կյանքի բոլոր գլխավոր յերկութիւների մասին։ Վերջին նպատակը կոչվում է պայքար՝ աշխարհահայոցքի համար։

— Ի՞նչ է աշխարհահայոցքը։

— Աշխարհահայոցք կոչվում է, մարդու ունակությունն՝ իրականությունը զիտականորեն հասկանալու համար։ Գիտենալ բնության հիմնական որենքները, զիտենալ հասարակության պատմությունը, նրա ներկա վիճակը—ահա այս բոլորը նշանակում են, ունենալ վորոշ աշխարհահայոցք։ Այ, հենց այս բանն են, վոր շատ ու շատ անհրաժեշտ ե յուրաքանչյուր բանվորի ու գյուղացու համար։

Ցեթե գյուղացին գիտենա, թե ինչից և անձրի գտիս, ինչպես և վարեզից են առաջանում՝ ցտնքները վոչնչացնող վնասատուները և այսպիսի շատ բաներ, նայերք չի գիտի տերտերին և վրկություն խնդրի, թափոր, մաղթանք կատարել տա, այլ անմիջապես կդիմե զիտության ոգնությանը։ Իր սիրելիներից մեկի հիվանդության կամ անասունների «զարագի» գեղքում, մինչեւ այժմ ել գյուղացիներից շատերը գիմում են «հեքիմներին»։ Ցեկ այս «հեքիմները» շատ գեղքերում վոչ միայն չեն սպնում, այլև մեծ վնասներ են տալիս։

— Ի՞նչից ե սա։

— Բոլորը նրանցից ե, վոր գյուղացին չգիտե բնության հիմնական որենքները, չգիտե, թե ինչպես և առաջացել կապիտալիստական հասարակակարգը, ինչպես և ընթանում նրա զարգացումը։

Նույնը կարելի յե ասել, նաև բանվորության վերաբերյալ։ Շատ բանվորների, մինչեւ այժմ հայտնի չե, թե ինչպես և առաջացել կապիտալիստական հասարակակարգը, ինչպես և ընթանում նրա զարգացումը։

— Բայց չե վոր բանվոր գառակարգը կապիտալիզմի դիմուլոր թշնամին ե, ուրեմն նրան անհրաժեշտ ե յով ճանաչել իր հակառակորդ գառակարգին։

Մի ուրիշ որինակ. ի՞նչ ե «բանվորի ու գյուղացու շաղկապը». գժվար թե ամեն մի գյուղացի ու բանվոր

պատասխանի այս հարցին, այն ինչ «բանվորի ու գյուղացու շաղկապի» վրա յե կանգուն ամբողջ խորհրդային իշխանությունն ու ամբողջ պրոլետարական հեղափոխությունը:

Յեվ այսպես, մենք տեսանք, վոր կարեոր ու գործնական նշանակություն ունի աշխարհահայցքի կազմում՝ բանվորի ու գյուղացու համար: Աշխարհահայցքը բարձրացնում է բանվորի ու գյուղացու դաստիարային գիտակցությունը, նրանց ազատազրում և տերտերների, չեքիմների և շատ խարերաների ազգեցությունից և վերջապես ողնում և նրանց կառուցելու՝ նոր կյանք, նոր տնօնեաություն, նոր կենցաղ: Այս վերջինի վրա հատուկ ուշադրություն պիտի դարձնել: Հաճախ այս ու այն բանվոր կամ գյուղացին՝ գանգառվում են խորհրդային ապահարատի բյուրոկրատիզմից: Վորն ե, ամենալավ ու ճիշտ ճամբան, այս արտադից աղատվելու:

— Աշխատավոր մասսաների լուսավորումը:

Յեթե գյուղացին իմանա մեր սահմանադրությունը, որինքներն ու գեկրեաները, վոչ մի կուրակ և անհարադատ ծառայող, վոր խցկել և գյուղխորհուրդի կամ մեր պետական ապահարատի մեջ, չի կարող գյուղացուն ասնջել:

Վորպեսզի արդյունաբերությունը կատարելազորածենք, ենպիսի հզոր կոռպերատիվներ կազմակերպենք, վոր կովեն մասնավոր կազմակալի գեմ, վորպեսզի բարերափենք բանվորական բնակարանները, այս բոլորի համար, նորից անհրաժեշտ են գիտելիքներ. վոչ թե հատ ու կենա, գեսից գենից հավաքած գիտելիքներ, այլ ընդհանուր գիտություն, ամբողջ կյանքն ըմբռնելու, հասկանալու կարողություն—այսինքն աշխարհահայցք:

Այսուղից պարզ ե, վոր ինքնազարդացման գյուղավոր նպատակն աշխարհահայցքի մշակումն է:

Չեզնից շատերը հարց կատան. իսկ ի՞չպես ուսումնասիրել, մեղավելի հետաքրքրուղ վորեե ճյուղ, մասնագիտություն:

Մենք կասենք. ընդհանուր աշխարհահայցքը ունենալ, չի նշանակում մասնագիտացումից հեռանալ, չուսումնասիրել տանձին ավելի հետաքրքրուղ հարցեր: Ընդհակառակը, բնդհանուր աշխարհահայցքը նպատամում է, ավելի յև ողնում այդպիսի ուսումնասիրությունը:

Հարցը նրանում է, վոր յուրաքանչյուր մարդ, պետք է իմանա, վոչ միայն իր մասնագիտությունը, վոչ միայն իր սիրած տուրկան, իր սիրած գիտությունը, այլև ընդհանուր գաղափար ունենա մյուս տուրկոների և մյուս գիտությունների մասին:

Այս հարցում նույնպես մեր տեսակետը հիմնապես տուրբերգում և բուրժվականից:

Կազմիտալիստական հաստարեկարգում ամեն մի մասնագետ, «սպեց», բացի իր մասնագիտությունից, վոչինչ չի ուզում ճանաչել և գոչնչով ել չի հետաքրքրվում: Պատահում են շատերը, վոր իրենց ճյուղում մասնագետ են—խոչը գիտնական, իսկ մյուս ասպարեզներում մեր խորհրդային գործոցականի շափ չգիտեն: Ահա այս «նեղ» մասնագիտության հետ ե, վոր մենք պիտի կովենք: Մենք պարտավոր ենք, վոչ միայն լավ մասնագետներ լինել, այլև գիտակից բաղակացիներ, մեր գասակարգի, պրոֆմիության կուսակցության գիտակից անդամներ:

Սրանով մեր ինքնազարդացումը տարբերգում և Ամերիկայի ինքնազարդացումից և ամբողջ բուրժուական աշխարհի ինքնազարդացումից: Մենք նրանցից կարող ենք վերցնել այն բոլորն ինչ անհրաժեշտ ե ոգտակար ե, և ենք շպրտել այն, ինչ ոտար է մեզ, անհարազար, չի հազարակել այն, ինչ ոտար է մեզ, անհարազար:

մապատասխանում բանվոր դասակարգի նպատակներին, դործնական խնդիրներին ու պահանջներին:

§ 3. ԼԵՆԻՆԻ ԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՔՆԱ-
ԶՄԻ ԱՅՑՄԱՆ ԱՄԵՆԱՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Ե

ՄԵՆՔ արդեն գիտենք, վոր ինքնազարգացման հիմ-
նական նպատակը, աշխարհահայցք կազմելն է: Ամեն
մի դասակարգ, բայց իրեն և հասկանում աշխարհը, իր
ձեռք և վերաբերում շրջապատի յերեսույթներին, ունի իր
դասակարգային աշխարհահայցքը:

Բանվոր դասակարգի աշխարհահայցքը, դա մարք-
ություն և լենինիզմն է:

Բացատրենք:

Մարքսիզմը—Հեղափոխական ուսմունք է, վոր ան-
ցյալ դարսում, մշակվել և մարզկության մեծ մտածող-
ությունը՝ կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Ենգելսի միջոցով:

Ամբողջ ուսմունքը Մարքսի անունով ել կոչվում է:
Լենինիզմը, դա մարքսիզմի շարունակությունն է:

«Լենինիզմը, իմպերիալիզմի դարաշրջանի մարք-
ությն է: Ավելի ճիշտ, լենինիզմը պրոլետարական հեղա-
փոխության տեսությունն ու գործնականն ենդհանրա-
պես և մասնավորապես պրոլետարիտատի դիկտատուրա-
յի՝ տեսությունն ու պրակտիկան:

Մաքրսն ու Ենգելսն ապրել ու գործել են նախահե-
ղափոխական շրջանում. (խոսքը պրոլետարական հեղա-
փոխության մասին է). այն շրջանում, յերբ չկար զար-
դացած իմպերիալիզմ, այն ժամանակաշրջանում, յերբ
պրոլետարիատը գետ հեղափոխության նախապատրաստ-
մանն ըրջանն եր ապրում, յերբ պրոլետարական հեղա-
փոխությունը գետ գործնական անխուսափելիություն
չեր ներկայացնում:

Իսկ Լենինը, Մարքսի ու Ենգելսի աշակերտը, տպրել
ու գործել և զարգացման հասած իմպերիալիզմի շրջա-

նում, ծավալվող պրոլետարական հեղափոխություն չըր-
ջանում, յերբ պրոլետարական հեղափոխությունն ար-
դեն չախջախել եր բուրժվական դեմոկրատիային, հայ-
թել մեր յերկրում և խորհուրդների դարաշրջանի, պրոլե-
տարական գեմոկրատիայի դարաշրջանի սկիզբ եր գրել:

Ահա թե ինչու «լենինիզմը մարքսիզմի շարունակու-
թյունն է»:

Լենինիզմի ուսումնասիրությունը յուրաքանչյուր
զիտակից բանվորի հիմնական նպատակը պիտի լինի:
Լենինիզմը բանվորներին ու գյուղացիներին սովորեց-
նում է պայքարել իրենց բազմաթիվ թշամյների գեմ.
լենինիզմի գրոշակի տակ և զուրս դալիս համաշխարհա-
յին հեղափոխական պրոլետարիատը: Իմանալ և զիտակ-
ցել լենինիզմը, լինել զիտակից լենինյան, նշանակում և
զտնվել կովի գաշտում, ամբողջապես զինված:

Կոմունիստական կուսակցության ուժը, ծանր պայ-
մաններում, հաջողակ կերպով կառուցելու նրա կարողու-
թյունը՝ կոլեկտիվ կերպով լենինյան մեթոդին տիրա-
պետելու մեջ և կայանում:

Ուսումնասիրել մարքսիզմն ու լենինիզմը, ի հարկե-
հեշտ չե: Հարկավոր ե, լուրջ և մտածված վերաբեր-
մունք: Բայց այդ գժվարին աշխատանքի արդյունքներն
ել շատ գնահատելի յեն:

Յեկ այսպես, ի՞նչ և հարկավոր, գիտակից լենինյան
զառնալու համարը: Ի՞նչ գրքեր պիտի կարդալ այս հարցի
մասին: Այս մասին կան հատուկ գրացուցակներ. մենք
կունք մի քանի խորհուրդներ:

Լենինիզմն ուսումնասիրելու համար, ամենալավն է
կարգալ, հենց իրեն լենինին: Զպիտի բաժանել լենինիզ-
մը կոմունիստական կուսակցության պատմությունից.
լենինիզմն ու բոլշեվիզմը նույն բաներն են: Լենինիզմի
պատմությունը, բոլշեվիզմի պատմությունն է: Դրա հա-
մար, լենինիզմի տեսության հետ միասին, պիտի ու-

սումնասիրել Հ. Կ. Կ. պատմությունը։ Հասուկ ուշադրությունը պիտի գարձնել 1905 թ. գեղքերին, ոռուական առաջին հեղափոխությանը և Հոկտեմբերյան հեղափոխությանը։

Վերջապես, անհրաժեշտ է խորը կերպով ծանոթանալ, թե ինչպես եր Անինը պայքարում ու մերկացնում, բանվորական շարժման առաջին ներկայացուցիչների՝ գոմազան «Թեքումները», «անձառությունները» և «սրբալիները»։ Սա անհրաժեշտ է, վորապես ներկայիս բանվարությունը խուսափի անցյալի սխալներից։

Վերջապես, լինել լենինյան, նշանակում է, ակտիվ մասնակցություն ունենալ բանվոր դասակարգի պայքարում, պրոլետարական պետության շինարարության մեջ։ Նա, ով կտրված է կենդանի իրականությունից, նոյնը բերք չի հասկանա լենինիզմը, կենդանի ու հեղափոխական գործնականի ուսմունքը։

§ 4. ԻՆՔՆԱԶԱՐԳԱՅՈՒՄ ՅԵՎ ԳՈՐԾՆԱԿՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամեն մի բուրժվական գիտնական, ամեն մի ինտելեկտուա, վոր պարապում է իր գրասենյակում, ըստ եյության պարապում է ինքնազարգացմամբ։ Բայց բանվոր դասակարգի ինքնազարգացումը հիմնական կերպով դանականություն և նման ձեի աշխատանքից։ Բանվորն ինքնազարգացմամբ պարապելիս, վոչ մի բոպե չի մոռանում էլյանքը։ Միշտ ակտիվ մասնակցություն ունի նրանում, կյանքում միշտ ստուգում է իր տնտեսական գիտելիքները։ Բանվորը միշտ գիտությունը կապում է կյանքի հետ և գրանով այնպիսի հաջողությունների յի հասնում, վորոնք յերբեք չեյին կարող լինել՝ գրասենյակային պարապումքի գեղքում։ Յենթագրենք զու ուսումնասիրում ես 1905 թ. հեղափոխությունը։ Դրա համար կան

մի շարք համապատասխան գրքեր, վորոնց չետ ծանոթանալն անպայման անհրաժեշտ է։ Բայց լավ է, այդ գրքերին ծանոթանալուց հետո, պարզել, թե 1905 թվին քո դործարանում կամ արհեստանոցում, քո քաղաքում կամ դյուզում ինչպես ե կյանքն անցել, ի՞նչ և յեղել։

1905 թ. անցած զնացած բան է, վերցնենք մի ուրիշ որինակ։ Ասենք, դու ուզում ես ուսումնասիրել խորհրդականի պայմանագրությունը։ Այստեղ, տեսականի և գործնականի կապն ավելի կարեռ է։ Խորհրդային սոհմանագրությունն այն հիմնական որենքն է, վորով կամ սակարգում է խորհրդային պետությունը։ Դու պետք է վերցնես համապատասխան դասագրքեր, ասենք Ստուչկան կամ Գուրեվիչը և այդ գրքերի միջոցով ծանոթանա խորհրդային մարմինների կառուցվածքներ, խորհրդային ընտրական իրավունքին և այլն։ Բայց դա քիչ է։ Դու պետք է քո քաղաքի կամ գյուղի ընտրություններին ակտիվ մասնակցություն ունենաս։ Դու ծանոթացիր, թե ինչ աշխատանք էն կատարում ձեր գուշագիր կոչիւույի բաժինները։ Հետաքրքրվիր իմացիր։ Թե ինչպես երական պատավարվում համար քաջարական կամ գլուխամատիր ներկայիս հետ, այն ժամանակ զու լավ կրմրոնես, թե ինչով ե տարրերվում խորհրդային կառավարությունը բուրժվական կառավարությունից։

Ահա թե ինչ և նշանակում ինքնազարգացումը կապիւ բրականության հետ։

Մի ուրիշ հարց ել կա. այդ այն է, վոր ինքնազարգացումն միջոցով ձեռք բերած գիտելիքները պետք ե կիրառել կյանքում, իրագործել աշխատանքի ընթացքում։

Այսպես, աշխատանքի գիտական կազմակերպման օասին շատ գրքեր կան։ Վատ ե այն մարդը, վոր այդ որքերը կարգալով, իր արտագրության մեջ վորեն բան կարող լավացնել, բարելավել աշխատանքի կազմակերպումը։

Յեթե դու հետաքրքրվող գյուղացի յես՝ առենք ու-
շում ես իմանալ, թե ինչպես են ապրում զերժանական
գյուղացիք կամ ամերիկյան Փերժերները և համապա-
տասխան գրքեր ես կարդում: Կարգալուց հետո, յեթե
չո տնտեսության մեջ չես ոգտագործում ձեռք բերած
գիտելիքներդ, կնշանակե քո գիտելիքներն անտեղի կո-
րան, քո ինքնազարդացման աշխատանքները 75%-ով
գարգակ բաներ են:

Այսպիսով տեսանք, վոր ինքնազարդացումն ու ամենորյա աշխատանքը սերտորեն կապված էն իրար հետ։ Ամեն մի աշխատազ հենց սրանից յելներվ է, վոր պիտի սկսի ինքնազարդացմամբ պարագել։

§ 5. ԻՆՔՆԱԶԱՐԴԱՅԱՅՄԱՐՔ ՊԱՐԱՊԵԼՆ ԱՄԵՆԱՄԵՇ
ԲԱՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Ե

Մենք արգեն զիտենք, թե բանվորի ու զյուղացւ համար, ինչ չոկայական նշանակություն ունի ինքնազմարկ:

Պիտի ասել, վոր ինքնազարգացման աշխատանքը
պարապողին անասելի բավականություն և պատճառում։
Սա բացատրվում է ձենց ինքնազարգացման մեթոդով
(լեզանակ)։

Պարզենք :

Հիմնական տարբերությունն ինքնազարգացման և պարոցական պարապմունքի մեջ, դա ինքնուրույնությունն է: Ինքնազարգացող մարդի ստեղծագործող և նա ուրիշի վորոճածր չի լուրացնում. նա ամեն ինչի մոտենում է ոլալքաբողի, նվաճողի մասդրությամբ:

Նրա առաջ շատ արգելքներ կան, հաճախ նրանց հաղթահարելիք շատ դժվար է լինում: Այս, հենց այս ձեռք ձեռք բերած հաղթությունը շատ թանի է և մեծ բարդականություն է պատճառում:

ՎԵՐԴԱՆԵՆՔ ՎԻՇՎԻ ՀԵՐԵՒՄԱՅԻ ԱՆԻԿԱԿԱ:

Ահա, ավելի նրան մի թանկագին, լով խաղալիք թող մեկն ել, շատ հասարակն, ինքը շինի։ Անկասկած, յերկրորդ հասարակ, պարզ խաղալիքը, վոր ինքն և շինել, ավելի մեծ բավականություն կպատճառի յերեխացին։ Նույնը վերաբերում է նաև հասակավորներին։

Աշխատելով գրքի վրա ինքնուրույն կերպով, ամենքը
մեծ բավականություն են զգում, ամեն մարդու կյանք
դառնում է բովանդակալի. և վորքան շատ ենա աշխա-
տում, այնքան ավելի արագ ու թափով ե աճում նրա մեջ
ուսման սերն ու սովորելու անհագ ծարավը:

Բերենք մի քաղվածք հանգուցյալ Գ. Վ. Պլեխանովից
նամակից, վոր գրել եր իր քրոջը: Այս նամակից յերևում
է, վոր քույրը—Կլավդիա Վալենտինովնա Պլեխանովի
դանզատվել եր յեղբորը, վոր կյանքից դժգոհ է, վոր ի-
րեն մեջ նույնիսկ ինքնառպանության միտք և առաջո-
ցել: Գ. Վ. Պլեխանովը հետեւյալ պատասխանն է գրում:
«Յեթե քեզ ծանր ես զգում, սիրելի Կլավդիա, միայն
մի խորհուրդ կարող եմ տալ՝ սովորի՛ր, կարդա՛. յեթե
քեզ հետաքրքրի լուրջ ընթերցանությունը, դու անմի-
ջապես յերջանիկ կդառնաս: Անդամ Զերնիշեկսկին գեղե-
ցիկ կերպով գրել ե. «Զարգացած մարդն այնքան շատ
բավականություններ ունի»: Հավատա, վոր սա Փրատ
չե»:

Հանգուցյալ Պլեխանովի և Զերնիշեվսկու խոսքերին
պիտի լսել. պիտի միայն մի բան բավ հիշել—այն, վոր
դիտությունն առանց կյանքում՝ գործադրելու, անմիտ
բանէ ։ Յեզ ամենամեծ «բավականությունը» այն ժամա-
նակ է լինում, յերբ հաջողվում է զբքերից սովորածն
ովառողջել դործնակուն կյանքում :



ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

ԻՆՔՆԱՋԱՐԴԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

§ 6. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒ ԿՈԼԼԵԿՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Յերկու կերպ կարելի յէ ինքնազարգացմամբ պարուղի մենակ, անհատաբար և կամ կոլլեկտիվ կերպով, խմբակում, միասին։ Կան պայմաններ, վոր բնավ թույլ չեն տալիս կոլլեկտիվ պարապել։ Գործով ծանրաբռնը վածած ես, ժամանակ չկա։ շատ-շատ, յեթե պարապող մարդ ես, մի ժամ«թուցնում ես», մի քանի յերես կարդում և ողբած։ Այսպիսի պայմաններում, կարելի յէ յերազել խմբակային պարապմունքների մասին։ Պարզ է, վոր նման պայմաններում, խոսք կարող է լինել, միայն անհատական պարապմունքների մասին։

Կամ մի ուրիշ որբնակ՝ ասենք, յես ընկել եմ մի հնապիսի հեռավոր շըջան, վոր բոլորովին հնար չկա շփվել ինքնազարգացմամբ պարապողների հետ։ Այսպիսի դեպքում նույնպես, միակ ճարն առանձին պարապելն է։ Բերենք յերրորդ որբնակը։ յես «թափառական» կյանք եմ վարում, ասենք՝ հրահանգիչ կամ գործակալ եմ։ Այսպիսի դեպքում նույնպես խմբակում չեմ կարող աշխատել։

Մնացած բոլոր դեպքերում, խմբական, կոլլեկտիվ ինքնազարգացումը միանգամայն կիրառելի յէ։ Յեզ ողետք ե ասել, վոր խմբակում պարապելը, անհատականի հետ համեմատած շատ առավելություններ ունի։

Խմբակային աշխատանքի հիմնական առավելությունը, դա այն կարգ ու կանոնն է, վոր կա ամեն մի

խմբակում։ Բացատրենք։ Յերբ յես մենակ եմ աշխատակում, ինձ մոտ չկա այն շարժիչը, այն ուժը, վորը ստիպում է յերկար նստած աշխատել, լինել ճշտապահ և սրահանջկոտ գեպի ինձ։ կարծ ասած, ինձ մոտ բացակայում է կամքի ուժը, վճռական կերպով, ծրագրած աշխատանքը կտտարեկելու։ Սա ամենամեծ շարիքն է, անհատական աշխատանքի գեպքում։

Վորեմ բանվոր, վոր չի ընտելացել կարգալու, հենց վոր վորձում է գիրք կարգալ, հանդիպում է մի շարք որդելքների։

Գրքի ծանր և չոր լեզուն, հոգնեցնում և «ձանձրացրնում ե»։ կարգալու սերը կորչում է, և ընթերցողը, մի քանի պարապմունքից հետո, թողնում է պարապելը։ Կամ այսպես ել և լինում։ պարապմունքները լավ են ընթանում, բայց ինչ վոր կողմնակի բաներ խանգարում են և ստիպում ընթերցանությունն այսորվանից վաղը զցել և վերջի վերջու բան չի գուրս գալիս։ Այդպես չե խմբակում։ Ենանցի աշխատանքը մարզուն դիսցիլինայի յէ յենթարկում։ Տեսնում ես թե ինչպես են ընկերներդ աշխատում, յեռանդի յես գալիս, քո մեջ առաջանում է պատասխանատվության զգացում։ վերջապես դու ստիպված ես յենթարկվել խմբակի կանոններին ու դիսցիլինային։ Յես այսոր ցանկանում եմ կինո գնալ, բայց վաղն իմ զեկուցումն ե խմբակում, ուրեմն ստիպված եմ՝ նստել ու որպարզել։ Այսոր յես «տրամադրություն» չունեմ աշխատելու, բայց ինձ սպասում են ընկերներս, ամոթ և խմբակի պարապմունքից փախչել և ահա յես շտապում եմ խմբակի պարապմունքին։ Այսպիսով, խմբակային, կոլլեկտիվ ինքնազարգացումն առաջացնում է մի շարք այնպիսի խմբաններ, վոր չեն կարող լինել, անհատական պարապմունքների ընթացքում։

Կոլլեկտիվ ինքնազարգացման մյուս առավելությունը նրա մեթոդովն է՝ իրագործման յեղանակը։ Յերբ յես

մենակ եմ աշխատում, գժվար և ինձ ստուգել: Հաճախ այնպիսի հարցեր են տնկվում առաջդ, վոր պատասխան չես գտնում: Հաճախ ել, ցանկանում ես վիճել ուրիշ հետ, լսելնրա կարծիքը: Այս բոլորը հնարավոր ե, միայն խմբակին պարապմունքների ժամանակ: Հենց այս նպատակն ել ունեն խմբակները: Յեզ վերջապես ինքնուսների կոլլեկտիվն ունի մի շարք տեխնիքական տուովիրություններ: Գրանք են՝ միասնաբար գիրք և գրենական պիտույքներ առնելը, կոլլեկտիվ կերպով գրադարանին բաժանորդագրվելը և այլն:

Ահա կոլլեկտիվ պարապմունքի առավելությունները:

§ 7. ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԱՇԽԱՏԻ ՄԵՆԱԿ ՊԱՐԱՊՈՂԻ

Ամենից առաջ, պետք է պարապմունքների ծրագիր կազմել: Այս ծրագրին անպայման պիտի ճշգրիտ կերպով հետեւել: Ապա պետք է ունենալ՝ գրքեր, տեղակներ, մատիտ, աշխարհագրական փոքրիկ քարտեղ և բառարան: Սրանից հետո, ինքնուսն աշխատանքի պիտի անցնի: Գիրքը կարդա և կարդացածը մշակի: Ինքնուսը չարագացը պետք է ստուգի, թե այս կամ այն հարցը վորչափ է յուրացըրել: Յենթադրենք գիրքը կարդացիր և քեզ թրփում ե, ինչ վոր գրված ե, հասկացար: Մի ժամից հետո, վեճի յես բռնվում ընկերոջդ հետ, հենց նույն հարցերի մասին և տեսնում ես, վոր բոլորովին չես կարողանում առարկել, չգիտես ինչ պատասխանել քեզ հետ վիճողին կամ զրուցողին: Նշանակում ե, կարելի յե գիրքը հասկանալ, բայց չյուրացնել, չհիշել: Իսկ սա նշանակում ե, վոր գույք անտեղի եք կարդացել: Այնպես պիտի կարդալ, վոր կարդացածը տպավորվէ քո գիտակցության մեջ, հարրատացնի գիտակցությունդ, սովորեցնի մտածել ու դառնել: Այս նպատակով ե, վոր դպրոցում ստուգում են կառուրում: ստուգին իր աշակերտին հարցեր և տալիս:

Քո «ստուգումն» ել նրանում և կայանում, վոր դուղիստի պատասխանես գրքի «ստուգիչ հարցերին», կոմյեթե գրանք չկան, ինքու այդպիսի հարցեր դնես և մշտեկես: Ստուգման նպատակով, վորոշ նյութերի մասին, կարելի յե զեկուցումներ գրել, յեթե թվաբանությունից ե, խնդիրներ լուծել և այլն:

Յերկորդ անելիքը պիտի լինի, կարդացածի կոնրոպեկտը կազմել: Վորեւ գիրք կոնսպեկտի վերածել, նշանակում ե, ավելի հիմնավոր անցնել այդ գիրքը:

Վերջապես յերրորդ գրությունը, գա անցած տեսական նյութերի գործնականի հետ կապելն ե, ոգտագործելը: Այս մասին մենք արդեն խոսել ենք § 4-ում:

Ահա սրանք են մենակ ինքնաղարդացմամբ պարտողի աշխատանքների հիմնական մեթոդները:

§ 8. ԻՆՔՆԱԶԱՐԴԱՑՄԱՆ ԽՄԲԱԿՆԵՐ

Խմբային աշխատանքն այլ ե: Խմբակում կոլլեկտիվ ճշկման ու քննության և յենթարկվում գիրքը: Այսպես խմբակի անդամներից մեկը, բարձր ձայնով, կարդում է. ապա սկսվում է վիճաբանություն: Հաճախ, խմբակի անդամները միասնաբար կարդացածի կոնսպեկտն են կազմում կամ պատասխանում են ստուգման հարցերին:

Յեթե խմբակի անդամները լավ գրագետ են, նրանք կարող են զեկուցումներ կարդալ և ապա քննադատել, ուղղել զեկուցումը: Ինքնաղարդացման խմբակը կարող է կողմաներաբել եքսկուրսիաներ և գործնական պարապմունքներ, վորպեսզի լավ յուրացնեն նյութը: Յեթե վորեւ ինքնաղարդացման խմբակ գնա քաղաք կամ այլ տեղ ծանոթանալու այս կամ այն հարցին, նրան անպայման կթույլատրեն տեսնել թանգարանները, ծանոթանալ արդյունաբերության, խորհրդային մարմինների հետ և մեն ինչ կրայատրվի: Ինքնաղարդացման խմբակներում անհրաժեշտ է կարդալ՝ լրագրեր և ժուրնալներ: Ամեն

ժարդ, իր միջոցներով չի կարող լրագիր կամ ամսաթերթ ստանալ: Իսկ միասնաբար միշտ կարելի յէ: Անհրաժեշտ է խմբակում լրագիր և թերթեր կարդալ, վորպեսզի խրժ-բակի աշխատանքը սերտորեն կապվի բնթացիկ կյանքի հետ:

Ինքնազարդացման խմբակներն ակտիվ մասնակցություն պիտի ունենան ակումբային աշխատանքներին, պատի լրագրերին և այլն: Ինքնազարդացման խմբակի բոլոր անդամները շարունակ և ամեն տեղ ագիտացիա պետք է մղեն, բանվորներին ու գյուղացիներին համոզեն, ինքնազարդացման խմբակներ կազմակերպել և միտցայլ ջանքերով ուսումն ու գիտություն սովորել: Այսուղից պարզ է, վոր խմբակային, կոլլեկտիվ աշխատանքներն անկասկած ավելի ողտափետ են, քան անհատականը:

§ 9. ԻՆՔՆԱԶԱՐԴԱՑՄԱՆ ՀԱՄԱԴՐԱԾ ՄԵԹՈԴԸ

Այն գեպքում, յերբ անհատական ինքնազարդացումը կազմվում է, համաձայնեցվում՝ կոլլեկտիվ, խմբակային պարագմունքների հետ, այդ ձեի աշխատանքը կոչվում է համագրած (համակցած) մեթոդ:

Յենթագրենք յես ցանկանում եմ քաղցրագիտություն ուսումնասիրել: Ահա, մի քանի ընկերներ նույնպես ցանկանում են քաղցրագիտություն ուսումնասիրել. այսպես հավաքվում են 4—5 հոգի և խմբակ ենք կազմում: Վորոշում ենք, վոր և տանը պիտի աշխատենք և խմբակում: Ծրագիր են կազմում, ապա նյութը բաժնում ընկերների մեջ և հանձնաբարում՝ տանը պատրաստվել: Վորոշ ժամանակից հետո, ընկերները պատրաստի, կոնսուլտանտները ձեռքներին, գալիս են խմբակի ժողովին և ղեկուցում. մնացած ընկերները՝ լրացնում են, վիճում և այսպես խմբովին յուրացնում են նյութը:

Այսպես ել շարունակում են աշխատանքները: Հա-

նախ հակառակն ել են անում: Խմբակում կարգում են ամբողջ գիրքը, կոլլեկտիվ կերպով քննում, մշտակում նյութը ապա, հետո միայն, հանձնաբարում են իրմբակի անդամներին՝ տանը, անհատաբար, կարգալ ու մշակել նյութը: Մեր համոզումով, այս մեթոդը, վոր կոչվում է «համագրած մեթոդ», ամենահաջողն է: Նրա մեջ կա անհատական պարագմունքի բոլոր լավ կողմերն ու խմբակայինն աշխատանքը: Սրանից և, վոր ամենամեծ արդյունքն է ստացվում:

§ 10. ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՅԻ ՍՈՎՈՐԵԼԸ

Ինքնազարդացման ձեկն ել բացակայությունը սովորելն է: Ինքնազարդացման աշխատանքների ժամանակ սովորողն աշխատում է առանց ղեկավարի: Իսկ բացակա ուսուցման մեթոդով աշխատելիս, ղեկավար անպայման կա: Ղեկավարում է ընդհանրապես կրթական հիմնարկին կից—բյուրոն, վորը կապվում է ինքնազարդացմանը պարագող անհատների կամ խմբակների հետ և գրավոր կերպով ղեկավարում է նրանց աշխատանքը: Այսպես և լինում: Հայտարարություն են լինում, վոր այսինչ հարցի մասին բացակա ուսուցման կուրսեր են բացվում: Ով ցանկանում, գրվում է: Այդ կուրսերի բյուրոյից ամեն մի գրված մարդ ստանում է կուրսերը բյուրոյից ամեն մի գրված մարդ ստանում է կուրսերը հրահանգները. այսինքն՝ այսինչ աշխատանքն այսովորոշ հրահանգները. այսպիս այսինչ աշխատանքն այսովորոշ հրահանգները. այսպիս կատարել: Վորոշված ժամանակի ընթացքում, նա պիտի կատարի այդ «գասոր»: Գրքեր կարդա, ղեկուցում պատրաստի, ստուգման հարցերը կարդա, ղեկուցում պատրաստի, ստուգման հարցերին պատասխանի և այլն: Այս բոլորը նա ուղարկում է կուրսերը և ցուցմունքներ և ստանում: Այս ձեի պարագմունքները շատ տարածված են արտասահմանում: Վերջերս կ. Ս. Հ. Մ. մեջնույնպես տարածվում են: Այսպիսի բացակա ուսուցման (զարգացնելու օջախությունը) կուրսեր կան՝ ինքնազարդացման համառուսական կոմիսիային

կից, Արհմիությունների Հոմամիութենական կենտ-
խորհրդին կից և շատ կրթական հիմնարկներում:

Ամեն մի բանվոր և գյուղացի, վորտեղ ել նա ապրե-
լիս լինի, նա կարող է հետաքրքրվել, կապվել ինքնազար-
դացման բացակա ուսուցման կուրսերի հետ և նրանց զե-
կավարությամբ ուսումնասիրել իրեն հետաքրքրոց
հարցերը:

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

Ինքնազարդացման հՄԲԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ
ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

§ 11. ՎՈՐՏԵՂ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԻՆՔՆԱ-
ԶԱՐԴԱՑՄԱՆ հՄԲԱԿՆԵՐ

Ինքնազարդացման խմբակներ պիտի կազմակերպել,
առաջին հերթին, բանակումքներին կից:

Ակումքների վարչությունները միշտ սիրով կընդա-
ստին ձեր ցանկությանը: Խմբակներ կարելի յե կազմա-
կերպել նաև գրադարաններ կից: Վերջապես, գյուղերում,
ինքնազարդացման խմբակներ կարելի յե կազմակերպել
իրածիթ-ընթերցարաններին կից:

Քանի՞ հոգի պիտի լինի, վոր խմբակը կազմակերպ-
վի: Ճշգրիտ թիվ դժվար ե ասել: Ամենալավ խմբակը,
մեր կարծիքով, կարելի յե 5—10 հոգուց կազմել:

Հիմա հարց է առաջանում. ի՞ չպես սկսել խմբակի
կազմակերպումը:

Յերբ յերկու հոգի ճարպել են, նրանք համաձայնու-
թյան յեն գալիս և եսպիսի մի հայտարարություն են աս-
լիս:

Ով ցանկանում է ինքնազարդացման խմբակում
ապահովել, թող հունվարի 10-ին յերեկոյան ժամը
7-ին, դա ակումքի № 7 սենյակը:

հախաձեռնող խմբակ.

Եթան հայտարարություններ կարելի յե գրել նաև
ողանուի թերթերում. կարելի յե հայտարարել՝ ընդհանուր ժամը:

Դավներում, ներկայացում-հանդեսներից առաջ և այլն։
Յեթե նշանակված ժամին, նույնիսկ մարդ հավաք-
՛ի պիտի ժողովը բանալ։ Այդ ժողովը կազմակեպչական
բնույթ և կրում, այդանու մշակվում է պարապմունքների
պլանը։ Ցանկալի յեւ, առաջին ժողովին հրավիրել, գոր-
ծին տեղյակ ընկերոջ։ Առաջին ժողովում և նույնպես,
վոր պիտի ընտրել՝ խմբակի քարտուղար, վորի պարապ-
կանությունն է լինելու՝ պարապմունքների արձանա-
դրությունները գրել, հաճախումների հաշվեառում կա-
տարել և բոլոր նյութերը պահել։

§ 12. ԽՄԲԱԿԻ ԿԱԶՄԸ

Ո՞վ կարող է խմբակի անդամ լինել։

—Ամեն մի բանվոր, գյուղացի կամ ծառայող, վոր
կարդալ-գրել պիտե։ Գրադիտությունը միակ պայմանն
է խմբակի մեջ ընդունվելու։ Գրադիտություն ասելով,
չպիտի հասկանալ՝ անսխալ և ճիշտ կերպով, գրավոր,
իրեն մտքերն արտահայտելը. դա բավական դժվար բան
է. Հենց խմբակում կարելի յեւ այդ բանը սովորել։

Խմբակին անդամագրվողներից պահանջվում է մի-
տյն գրաճանաչ լինել, գրել կարգալ խմանալ։ Այսպիս-
ու բեմն, ինքնազարդացման առաջին պահանջը գրադետ
լինեն է։

Յերկրորդ հարցը դա խմբակի միատարրության
հարցն է։ Շատ վտանգավոր է, յեթե խմբակի անդամնե-
րից մեկը շատ զիտե, մյուսը քիչ կամ վոչինչ։ Այսպես.
յեթե խմբակի անդամներից մեկը վոչ մի գիրք չի կարգա-
ցել, վոչինչ չգիտե, իսկ մյուսն ավարտել է կուսակցական
յերկրորդ աստիճանի գպրոցը, այդպիսի խմբակից բան
չի դուրս գա։

Խմբակները կազմակերպելիս պիտի աշխատել, վոր
մասնակցողները նույն վորակի ու պատրաստության տեր
լինեն։ Իհարկե, բացարձակապես մի աստիճանի վրա

կանգնած մարդիկ ձարելն անհնարին է, բայց բոլորովին
ել գժվար չե մոտավորապես նույն պատրաստությունն
ունեցող մարդիկ գտնել։

§ 13. ԽՄԲԱԿԻ ՔԱՐՏՈՒԹՅԱԲԸ

Միքանի խոսք խմբակի քարտուղարի մասին։

Առաջին կազմակերպչական ժողովում, ընտրվում է
խմբակի քարտուղար։ Քարտուղարն է, վոր կապ և հաս-
տառում՝ կուսակցական և արհեստակցական մարմիննե-
րի հետ, գրքեր, գրենական պիտույքներ և գնում, արձա-
նագրությունները գրում, հաճախումների հաշվեառումն
և կատարում և այլն։

Տեսնում եք, քարտուղարի գործն այնքան ել հեշտ
չե, պիտի ընտրել՝ յեռանգուն, գործունյա և վոր գլխա-
վորն է, միանգումայն գրագետ մարդ։ Վատ քարտու-
ղարը կարող է խմբակի ամբողջ աշխատանքը քայլայել,
այն ինչ լավ կազմակերպչից շատ բան և կախված։ Յեթե
խմբակների անդամները լրիվ գրագետ են, կարելի յեւ
կտրճ ժամանակամիջոցում նոր քարտուղարներ ընտրել,
վորպեսզի փոփոխվեն և աշխատանքի քաշվեն շատ ըն-
կերներ։

Պարապմունքների ժամանակ պիտի ընտրել նուի նո-
խազահ։

§ 14. ԽՄԲԱԿԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդյոք կարիք կա՝ արձանագրության, ավելորդ
ձեռականություն չե այդ։

—Արձանագրությունները յեւ նշանակություն ու-
նեն. Նրանց միջոցով խմբակի աշխատանքը վորոշ սիստե-
մի յեւ յենթարկվում, կազմակերպչական ճիշտ հունի մեջ
և գրվում։ Հենց պարապմունքի սկզբում, խմբակը լսում
է իր նախկին պարապմունքի արձանագրությունը, բայ-

Հիշում ե այն յեզրակացություններն ու այն ամենն ինչ ինքը յուրացրել է։ Հաճախ արձանագրության այս ու այն կետի առթիվ կարող են վիճաբանություններ ծագել. ուրեմն տեսնում եք, վոր արձանագրությունը կարեգոր բան է, խմբակային պարապմունքների մի մասն է։

Բացի դրանից, արձանագրություն կազմելը ժեծ ոգուած ե տալիս այն ընկերոջը, ով կատարում է այդ աշխատանքը. նա վոչ միայն սովորում է իր մտքերը ձետերպել, այլև նորից կրկնում է, վորոճում անցած հյութը։

Ահա նայեք ներքեւում բերված որինակելի արձանագրությանը. աջ կողմի «լսեցին» մասը, կարծեք թե խըրակի պարապմունքի, բոլոր խոսակցությունների ու յեզրակացությունների կոնսպեկտն է։ Իհարկե եղանակի արձանագրություն կազմելն այնքան ել հեշտ չե, բայց մենք միքանի անդամ ասել յենք, վոր ինքնազարգացման աշխատանքների դժվարությունները պատկանում են հաջողությամբ։

Ահա որինակը մի արձանագրության.

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

«Տոմսկու» անվան ակումբին կից ինքնազարգացման խմբակի։ 1926 թ. սեպտեմբերի 20-ին.

Ներկա յեյին խմբակի անդամներ՝
Հովհաննես Մանուկյան.

Արամ Գասպարյան.

Շողիկ Ավետիսյան.

Գագիկ Ռշտունի.

Սերիկ Հակոբյան.

Նախագահ—Արամ Գասպարյան.

Քարտուղար—Սերիկ Հակոբյան.

Լ Ս Ե Ց Ի Ն

Վ Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Ընկանանես Մանուկյանը
բարդաձայն կարգաց Ն. Բա-

րան սոցիալիզմի տարրերու-

տուրինի «Ռուսաստանի սոց-
գեմոլոգականի պատմությու-
նը». հրատարակութ. «Մուկո-
վսկ. Բաբոչի», 1922 թ.։

Ըսթեղցումից հետո տեղի ու-
նեցան վիճաբանություններ։

1. Ընկ. Գագիկ Ռշտունին

գանում եր, վոր չպարզվեց մինչև

Մարքսը լեզած սոցիալիզմի և

Մարքսի ու Ենգելսի սոցիալիզ-

մի տարրերությունը։

2. Շուշիկ Ավետիսյանը հայտ-

նեց, վոր իրեն չպարզվեց 1-ին

Խստերնացիոնալի անկումը։

2. Միջազգային Կոմունիստա-

կան Կուսակցության առաջին

հիմնաբարը, ու կոմունիստների

միությունն եր։ Այդ միությու-

նը կարճ կյանք ունեցավ, վո-

րովհետև վրա հասավ ուսակցիան

1848 թ. հեղափոխությունից հե-

տու։

3. Ավելի մեծ գեր խաղաց

«Բանվորների Միջազգային Ըն-

կերությունը», 1-ին Խստերնա-

ցիոնալը։

4. Մինչև Մարքսը լեզած սո-

ցիալիզմը պրոլետարիատի սո-

ցիալիզմը չեր, հույսը զրել եր

հարուստ դասակարգին համոզե-

ւով մի բան աներ։

Առաջին Խստերնացիոնալ

քակալիզմը մի կողմից ունեկ-

ցիալի հարվածներից (Փարիզի

կոմունալի տապալումից հետո)

մյուս կողմից ներքին տարա-

ձայնություններից։

Ժողովի նախագահ (ստորագրություն)

Ժողովի քարտուղար (ստորագրություն)

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԵՆՔԱՋԱՐԴԱՑՄԱՆ ՀԻՄՔԸ ԾՐԱԳՐՎԱԾ ԱՇԽԱ-
ՏԱՆՔՆ Ե

§ 15. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՑՈՒ- ԹՅՈՒՆՆԸ

Ինքնազարդացման գլխավոր աշխատանքը ծրագիր
կազմելն է: Այսինքն ամեն ժարդ ել, վոր մեկ-մեկ գիրք
և կարդում, փաստապես պարապում ե ինքնազարդաց-
մամբ: Բայց նրա ինքնազարդացումը կրում է տարրերու-
յին ու անկազմակերպ բնավորություն: Իսկական, գի-
տակցական ինքնազարդացումը մի աշխատանք է, վոր
կատարվում է վորոշ ծրագրով: Ինքնազարդացման խօժ-
ուակի անդամը, հենց սկզբի որից, գիտե թե ինչ է իր նր-
պատակը, ինչ և ցանկանում սովորել, վորտեղից պիտի
սկսի ուր զնա, ինչ գրքերի հետ պիտի գործ ունենա: Վեր-
ջապես նա պիտե, թե կանոնավոր կերպով վոր որերը պի-
տի պարապի, վորքան ժամանակից հետո կհանի իր նր-
պատակին: Ահա այսպես, ինքնազարդացման խմբակում
ամեն ինչ պիտի բղին ծրագրից, ամեն ինչ պիտի առրվի
շարժված ու ձեւված:

§ 16. ԺԱՄԱՆԱԿԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՅՑԸ

Բանվորական ու գյուղացիական ժառանակի համար,
ժամանակի կազմակերպման հորցը՝ բավական սուր
հարց է:

Հոկտեմբերը տվեց ութժամյա բանվորական որ,
բանվոր դասակարգին արամագրեց բավականին ժամա-
նակ, վոր նա կարող է ոգտագործել գիտակից բավակա-
նության և ինքնազարդացման համար:

Միաժամանակ հեղափոխությունը բանվորի ու գյու-
ղացու վրա մի շարք պարտականություններ գրեց: Յու-
րաքանչյուր գիտակից աշխատավոր, այս կամ այն կերպ,
ակտիվ մասնակցություն ունի հասարակական կյանքին՝
խորհրդի անդամ ե, կտարում է՝ կուսակցական, ար-
հետակցական, կոմսոմոլիստական պարտականություն-
ներ և այլն:

Շաբաթվա մեջ, հաճախ մի քանի ժողով ե լինում:
Կարծես թե ինքնազարդացման համար շատ քիչ ժամա-
նակ ե մնում:

Սա հարգելի պատճառ է. բայց կա և մի այլ բան, ոտ-
մեր անկույլուրականությունն է. դա մեր աշխատանքի
անկազմակերպվածությունն է: Դա՝ մեր անձշտապահու-
թյունն է, անսեղի կորցրած մարդկային աշխատանքը
չափասելը: Զեք վիճի յեթե տեսնք, վոր ամեն մեկին
որեկան առնվազն յերկու-յերեք ժամն անտեղի յե կոր-
չում:

Որինակներ բերենք: Հայտարարված է, վոր կինոն
ոկսվում է յերեկ. ժ. 6-ին, տոմս եք առնում, ներս գնում,
ոպատում եք, սպասում, պարզվում է, վոր կինոն սկսում
էն միայն 7-ին: Մի ժամ կորավ: Այդքան ժամանակում
կարելի յեր փոքրիկ, բայց արժեքավոր մի բան կարգալ:
Այսպես շատ որինակներ կարելի յե բերել: Այսպիսի բա-
ների պատճառով է, վոր շատ բնկերներ, զանգատվում
են, վոր ժամանակ չունեն:

—Ի՞նչ անել:

—Պետք է, ամեն բան կարգավորեք շատրու ոտքամոնի
շեջ զնել, ժամանակի բյուղի կազմել:

Ժամանակ միշտ կդանեք. պարզեք, թե շաբաթվա
ընթացքում քանի ժամ եք անտեղի կորցնում (այդպիսի
ժամեր չառ կդանեք):

Յեթև նույն իսկ քիչ լինի այդպիսի ժամերի թիվը,
Հրաժարվեք մի քանի բավականություններից, ժամանակ
անտեսեք և կանոնավորաբար ինքնազարգացմամբ պա-
րապեք:

Յենթագրենք դուք պարզեցիք, վոր շաբաթվա ըն-
թացքում 12 ժամ ինքնազարգացմամբ կարող եք պարա-
պել:

Անմիջապես կազմեք ձեր պարապմունքների ժամե-
րի դասավորումը:

Ասենք դասավորեցիք ժամերն այսպես.

Յ Ռ Յ Ա Կ

Յերկուշաբթի	պարապել	8—10	յերկոյան
Յերեքշաբթի	»	6—7	»
Չորեքշաբթի	»	8—9	առավոտյան
Շաբաթ	»	10—10 ^{1/2}	յերեկոյան
Կիրակի	»	12—2	յերեկվա

Այս ցուցակը կպարեք պատին և ինչ ել ուզում ե լինի
անպայման իրագործեք: Այդ ցուցակը ձեզ համար մի
պարտադիր վորոշում, մի պաշտոնական պարտականու-
թյուն պիտի լինի:

Յեվ այդպիսով, մի ամսից, ձեր աշխատանքները
կդառնան սովորական և առաջ կընթանան: Դուք ել չեք
նկատի, թե ինչպես փոխվեցիք՝ ճշտապահ ու պարապող
ժարդ դառնաք:

Իսկ այդ բանը խոչոր հաղթանակ է:

§ 17. ՊԱՐԱՊՄՈՒԹՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

—Ի՞նչ է պարապմունքների ծրագիրը.

—Ծրագիր առելով պիտի հասկանալ, ճիշտ կերպով
պարզել այն բոլորը ինչ պիտի ուսումնասիրել:

Յենթագրենք յես ուզում եմ քաղզրագիտություն
ուսումնասիրել: Կնշանակի, յես նախորոք պիտի նշանա-
կեմ, թե քաղզրագիտության վոր հարցերին պիտի համա-
պատասխան ու շաղբություն դարձնեմ, դրա համար ի՞նչ
ձեռնարկներ պիտի գտնել, ի՞նչ եքսկուրսիաներ պիտի
կատարել: Սրա համար շատ միջոցներ կան: Առաջին
և ամենահարմար միջոցը, դա արդեն պատրաստի ծրա-
գրերին դիմելն է: Համարյա թե ամեն բանի մասին
«Պոմոնի սամօօբրազում» ժուրնալում կարելի յէ ծրագրեր
գտնել:

Բացի սրանից, յերկրորդ միջոցը, վորեւ իմացող
րնկերից խորհուրդ հարցնելն է, կամ նրա ոգնությամբ
ձրագրեր կազմելը: Ավելի լավ է դիմել, վոչ թե ան-
հատների, այլ կազմակերպությունների: այսպես՝ քաղ-
լուսվարին, ագիտ-բաժնին, արհմիության կուլտ-բաժ-
նին, բոլորն ընկերաբարմեն ինչ կասեն: Վերջապես պա-
րապմունքների ծրագիր կարելի յէ կազմել ինքնուրույն:
Սա այնքան ել դժվար չէ: Դրա համար, նախապես մի գիրք
պետք է կարդալ, մշակել այդ նյութը, ապա հետազո
անելիքների ծրագիր կազմել: Յենթագրենք յես կարգա-
ցի Պ. Մ. Կերժենցիի «Լենինիզմ» գիրքը: Սրա հիման
վրա, արդեն կարելի յէ կազմել հետազա անելիքների
ծրագիրը: Կերժենցիի գիրքը բաժանվում է հետեւյալ 12
գլուխերի:

1. գլուխ Պատմական գրությունը.
2. » Լենինիզմի վորոշ տպարերը.
3. » Պայքար ոպպորտունիզմի գեմ.
4. » Բոլշիզմի ոռաջին հեղափոխության ժա-
մանակ.
5. » Կուսակցության կազմակերպումը.
6. » Գյուղացիությունը և հեղափոխությունը.

7. » Լենինիզմի գործելակերպը.
8. » 2-րդ ինտերնացիոնալից—կոմինտերն.
9. » Ազգային հարցը.
10. » Պրոլետարիատը և պետությունը.
11. » Խորհրդային Միության կազմակերպումը.
12. » Լենինիզմը և տրոցկիզմը.

Ահա այս վերնագրերն իմ առաջ են, յես կարդացել եմ գիրքը. Հարց և ծաղում, յես բավականին ծանոթ եմ Լենինին:

— Վոչ.

Լենինի կենսագրությունն ինձ բոլորովին անծանոթ է. Առևիճապես քիչ բան գիտեմ կոմունիստական կուսակցության մասին. այն կուսակցության, վորի հետ այնպես սերտորեն կապված է մեծ զեկավարի կյանքն ու պայքարը:

Այս Հարցերին անհրաժեշտ է լով ծանոթանալ: Յես վերցնում եմ գրացուցակը (կամ ընկերներից իմ անուժ) և վրաշում Լենինի կենսագրության մասին կարդալ Լիմիայի—Լենինի կյանքն ու գործունելությունը:

Իսկ կուսակցության պատմությունից Շելավինի կամ Զինովի գիրքը:

Ահա այս յերկու գրքերն ել յես պետք է մտցնեմ իմ ըլարապմունքների ծրագրի մեջ: Դրանք ել կարգալուց հետո, յես վորոշում եմ ուսումնասիրել Լենինի յերկերը: Դրանցից մի մասը հայերեն կա. ծրագիր եմ կազմում ու սկսում կարդալ այդ գրքերը:

§ 18. ՊԱՐԱԳԱՍՈՒՐՆՅԱԲՆԵՐԻ ՀՈՒՃԱՑԵՏՐ

Արգեն գիտենք, վոր ինքնազարդացման խմբակին անհրաժեշտ է պարապմունքների արձանագրություններ դժկել: Հենց դրա նման, ինքնուսն ել պետք և հուշտակեար

ունենա: Այդ հուշտակերտի մեջ պետք է գրել ամենորյա պարապմունքների արդյունքները: Ի՞նչ և արված այս գոր գրքի, վոր յերեսներն են մշակվել. ինչ Հարցեր հնացին չպարզված: Այս բոլոր հարցերին հուշտակերտը, պիտի գրվել՝ սեղմ և կարճ պատասխան: Սա չափ կարեռը բան կսովորեցնի քեզ:

§ 20. ՊՈՐՔԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՅԵՎ ԳՐԱԽՈՍՈՒ-
ԹՅՈՒԻՆԸ

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ԳԻՐՔԸ

§ 19. ԳՐԱԽՈՍՈՍԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ

Ներկայումս, այս կամ այն հարցի մասին, տառ-
չակ, նույնիսկ հարյուրավոր գրքեր են հրատարակ-
վում: Վերցնենք այսպիսի մի հարց, ինչպիսին լինի-
նիզմն է: Մի-յերկու տարվա ընթացքում, ահադին թր-
վով գրքեր են լույս տեսել: Իսկ ավելի հին հարցերի
մասին խոշոր քանակությամբ ամեն տեսակի նյութեր
ու ձեռնարկներ կան:

Ի՞նչ պիտի անես գրքերի ու բրոյարների այս ծո-
վում: Ինչպես գտնել բովանդակությամբ և ամեն ին-
չով հաջող աշխատանքները:

Ահա այս նպատակով, հրատարակվում են «գրախո-
սական ցուցակներ»: Զանազան տեսակի գրախոսական
ցուցակներ են լինում: Ամենից անհաջողը նրանք են, վո-
րոնց մեջ տպված ե միայն գրքերի անուններ:

Թուսերեն լեզվով կան նույնիսկ բավական տեղեկա-
տուներ: Դրանց մեջ վորոշ հերթով, հեշտից գեղի բար-
դր, ցույց են տրված այս կամ այն հարցի վերաբերյալ
գրքերի անուններ: Այս տեղեկատուները շատ են ոզնում
ընթերցողներին:

Հայերեն տեղեկատուներ չկան. պիտի բավականա-
նութեալ Պետհրատի հրատարակած գրացուցակներով և
ավելի պատրաստի բնկերներից խորհուրդներ հարցնելով.

Բացի գրախոսական ցուցակներից, ոռուսերեն լեզ-
վով հրատարակվում են նաև հատուկ գրախոսական ամ-
սոգրեր. այսպես որինակ «Հեղափոխություն և մամուլ»
(«Պечать и Революция») և այլն: Այս ամսագրերում
կարելի յէ գտնել ամեն տեսակի տեղեկանքներ:

Մնացած ամսագրերում և թերթերում նույնպես կան
գրախոսական բաժիններ, վորոշի լույս տեսած գրքերի
մտաբն քննադատականներ են լինում: Այդ քննադատա-
կաններից պետք է ոգտվել: Սոր հայերեն թերթերում
նույնպես, վոչ պարբերաբար, բայց յերթեմն լույս
տեսնում նման գրիսոսականներ:

Բոլոր տեսակի գրախոսականներից պետք է գր-
տակցաբար ոգտվել: ամեն բան հալած յուղի տեղ չպի-
տի գնել: Շատերը խորհուրդ են տալիս, քննադատու-
թյունը կարգավ գրքի ընթերցումից հետո: Հեռուն ը-
դնանք, միայն կատենք, վոր յուրաքանչյուր ընթերցա-
նությամբ պարագող պարտավոր և հետեւ գրախոսա-
կաններին:

ԳԼՈՒԽ ՎԵԶԵՐՈՐԴ

Ի՞նչպես կարդալ գիրքը

§ 21. Ի՞նք ե ՆԺԱՆԱԿՈՒՄ «ԳԻՐՔ ԿԱՐԴԱԼ ԻՄԱԿԱՐ»

Կարծում եք տժեն մի զբաղետ ժարդ գիրք կար-
դաւ գիտես։ Բնավ վոչ։ Հիանալի կերպով կարելի յե-
զիրք կարդալու տեխնիկային տիրապետել, լավ ար-
տասանել և ճիշտ զբել աժեն մի ըառը, բայց դա դեռ
չի նշանակում, վոր զիրք կարդալ գիտես։

Գիրք կարդալ, նշանակում ե՝ հասկանալ բոլորը,
ինչ գրված է գրքում. իսկ դա բավականին բարդ և
դժվարին դործ է: Միթե չեք փորձել զորեւ զիտական
գիրք կարդալ, յերբ չեք հասկացել, ուն եք զորեւ ու որ:

Հետաքրքրվում ես, վերցնում, ասենք, ժողովրդական անտեսության վերաբերյալ վորեւ զիրք։ Ակառած կարգավորական ափսոս, բան չես հասկանում։ ամեն յերեք բարից հետո՝ մի բոլորովին անհասկանալի, անծանոթ բառ։ Պատահում ե և ընդհակառակը. անծանոթ, ոտոք ըստ չկա, բայց ամբողջ միտքը չես հասկանում։

Ահա, տեսնում եք, կարգալ իմանալ, նշանակում ե կարգանալ հասկանալ կարգացածք։ Բոկ ի՞նչ ե նշանակում հասկանալ պիրքը։

Նշանակում ե յուրացնել, Հիշել կարդացածը: Հա-
ճախ ընթերցողը գանգատվում է... կարդալը կարդում
էմ, այն ել վոչ թե մեկ, այլ տասնյակ գրքեր, բայց արի
ահա, վոր վոչինչ չեմ հիշում: Ինչպես յերկում ե, Հի-
շողությունս ե թույլ:

Այսպիսի մարդկանց պիտի ասել. «կարող ե իսկա-
պես քո հիշողությունը թույլ ե, բայց բանը դրանում չե-
նմ բողջ գժբախտությունը նրանումն ե, վոր գու չես կա-
րազանում գիրք կարդալ, նրա բովանդակությունը յու-
լացնել»:

Յացնե՞՞»:

Հաճախ այսպիսի գեղքեր են լինում. սարքը ու
վորեւ հարցի մասին բազմաթիվ գրքեր ե կարգացել,
բայց նույն նյութի մասին, ինչ ուզում ես արա, չի կա-
րող, մի փոքրիկ գեկուցում կարգալ: Բան չի գուրս գա-
լիս: Գլուխն ամեն բանով լիքն ե, շատ բան գիտե, բայց
չի կարողանում ոգտագործել: Ասենք, թե ընկերոջը
պիտի բացատրի լենինիզմի եյությունը: Նո կարգա-
ցել ե այդ մասին շատ ու շատ գրքեր. ահա խոսում է,
ուզում ե մի բան հասկացնել, բայց չի կարողանում,
«կարծես զլիսից» գլուխը շացել ե, չքացել», գանգատ-
վում ե նա: Իսկ այնպիսի մարդիկ կան, վորոնց համար
ամեն մի կարգացած գիրք, մի գանձարան ե, վորան-
ոս միշտ կարող են ոգտվել:

Պրց սրբաւութեաւ կամ պատրիարքաւութեաւ առաջնակում է, այսպիսի ժարդիկ կարողանութ և
նշանակում է, այսպիսի ժարդիկ կարող է գիրքը տալ:
Արքեց ոգտվել, այն քաղել, ինչ կարող է գիրքը տալ:
Ուրեմն, կարողանալ գիրք կարդալ, նշանակում է,
1. Հասկանալ կարդացածը, 2. Հիշել կարդացածը և
3. ոգտագործել կարդացածը:

Տ 22. Ի՞նչպես ՏԻՐԱՊԵՏԵԼ «ԿԱՐԴԱԼՈՒ ԱՐՎԵՍՏԻՆ»

Այսպես ուրեմն, տեսանք, վոր «կարդալու ար-
վեստ» ել կա: Դրան տիրելն ել այնքան հեշտ բան չէ:
Հարկավոր ե. նախ, կարդալ այն կանոններով վոր ենքը
կյանքը, այսինքը՝ ինքնազարդացման հարուստ փորձն ե
մշակել: Հարկը՝ անհրաժեշտ ե միշտ փարզվել,
միշտ փորձ անել: Պետք ե ամեն որ կարդալ, կարդալ

ժաւիաը ձեռքին, կարդացածից կոհսղելու կազմել,
բաղաշքներ տնել և այլն:

Սկզբում այսպիսի ընթերցանությունը դանդաղ տ-
առջ կդնա. չպիտի շփոթվել: Այսոր մի ժամում մի յե-
րես կկարգաս, իսկ մի շարաթից հետո ավելի շատ կր-
կորդաս, հետագայում ավելի քան և այլն:

Վորոշ ժամանակից հետո (ճիշտ կերպով չի կարելի
տաել, թե վորքան ժամանակից դա կախված է ձեր ըն-
դունակություններից, չիչողությունից և այլն) ինքնե-
րը ել չեք նկատի, թե ինչպիս սովորեցիք գիրք կարդալ՝
հասկանում եք կարդացածը, յուրացնում բավանդակու-
թյունը, ձեր «աշխատանքն ու ջտնիքը չեն կորչում»:

§ 23. ԱՌԱՆՁԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ ՊԻԾԻ ՈՒՆԵՆԱԼ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՐՔԻՆ

Երբ դու մտագիր ես գիրք կարդալ, դու անպայ-
ման քեզ պիտի հարց տաս. «Ինչ նպատակով ես սա գրվել.
Ինչ չափով կարելի յե ոգտագործել: Նայած գրքի այս
կամ այն ընույթին, ըստ այնմ ել պիտի նրա վրա աշ-
խատել: Ասենք, ձեր առաջ ե հանրագիտական բառարա-
նը. միթե դուք կսկսեք այդ գիրքը սկզբից մինչեւ վերջը
կարդալ: Ի հարկե վո՞չ: Ամեն մի բառարան անձանոթ
բառերի և տեղեկանքների համար ե. ընթերցանության
համար անպետք ե: Ընդհակառակն, կարդալով Բուխո-
րին «Կոմունիզմի այլուրենը», դուք անպայման պի-
տի մշակեք նրա յուրաքանչյուր յերեսը: Նշանակում է
գիրքը տարրեր ձեռով պիտի կարդալ: Բերենք մի ուրիշ
որինակ:

Ասենք, ձեր առաջ են յերկու բրոցյուրներ. յերկու-
ուրն ել 30-ական յերեսից. մեկը Դիկտույնի «Ով ի՞նչով ե
ապրում» (մատչելի գրքույկ ե քաղաքանակության),
իսկ մյուսը կարլ Մարքսի ու Ֆրիդրիխ Ենգելսի «Կո-
մունիստական մանիֆեստն» և: Այս գրքերը բոլորովին

ուարբեր ձեռվ պիտի կարդալ: Դեկտեմբերի գիրքը կար-
ծես քաղաքանակության ներածություն ե: Նա պետք
է քիչ պատրաստված ընթերցողին, նրա համար վորպես-
ե զի պատրաստված ընթերցողին, նրա համար վորպես-
ե զի գրքի հետ ծանօթանալուց հետո ընթերցողն անցնի ա-
զելի դժվարին և լուրջ գրականության:

Ինչ վերաբերում ե «Կոմունիստական մանիֆես-
տին», այդ գիրքը վոչ միայն պիտի կարդալ, այլ և պի-
տի ուսումնասիրել: Սա լինելով նույն չափի ինչ Դեկ-
տեմբերի գիրքը, իր մեջ ունի հսկայական չափի տեղե-
շտեյնի գիրքը, իր մեջ ունի հսկայական չափի տեղե-
շտեյնի գիրքը, իր մեջ ունի հսկայական չափի տեղե-
շտեյնի գիրքը:

«Կոմունիստական մանիֆեստ»-ի ամեն մի գար-
ձըվածքը պարունակում է մի շարք հետաքրքիր մոքեր,
ձըվածքը պարունակում է մի շարք հետաքրքիր մոքեր:
Այնպիս վորոնց յուրացնելը քիչ ջանք չի պահանջում: Այնպիս
վորոնց յուրացնելը քիչ ջանք չի պահանջում: Կարելի յե և
պետք է կարդալ տարրեր կերպով, քան թեկուզ նույն
հյութի մասին մի շարք գրքեր:

Այս բոլոր ասածներից հետեւյալ յեզրակացությու-
նը պիտի հանել՝ նախքան գրքի ընթերցումը, պիտի վո-
րոշել նրա ընույթը: Նայած գրքի ընույթին, ըստ այնմ
ել կարելի յե մշակել նրա նյութը:

Հիմա հարց կտաք. «Քիչ պատրաստված ընթեր-
ցովն ինչպիս վորոշ գրքի ընույթը: Հաճախ դա դժվար
է նույնիսկ պատրաստի մարդու համար»:

Մենք կասենք, վոր անհրաժեշտ ե ոգտագործել բո-
լոր այն մեթոդներ (ձեռըրը), վորոնց մասին մենք խո-
սեցինք 5-րդ գլուխմ, այսինքն գրքի ընտրության մա-
սին: Պետք է ոգտագործել գրախոսական ցուցակները,
գնադատությունները, լսել ընկերների խորհուրդները
և այլն:

§ 24. Ի՞՞ՆՉԻ ՀԱՄԱՐ ԵՄ ԿԱՐԴՈՒՄ ԱՅՍ ԳԻՐՔԸ Գիրքը սկսելուց առաջ, այս հարցը պետք է տա իրեն

ամեն մի ընթերցող։ Յեթե կարդում ես, վորպեսզի
կրկնես ուրիշ է. յեթե կարդում ես նյութը մշակելու
համար, այդ ել տարբեր է. իսկ յեթե կարդում ես
պրօւմ այս կամ այն տեղեկությունները դանելու հո-
ւար, դա ել բոլորովին այլ նպատակ է։

Այսպիսով տեսնում ենք, վոր նայած քո առաջա-
դրած նպատակին, ըստ այնմ ել մոտեցում պիտի
ունենաս։

Դա չատ անհրաժեշտ է, ընթերցանությունը գիտու-
թից հողի վրա դնելու համար։

§ 25. ԴԺՎԱՐ ՏԵՂԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Յեթե անհասկանալի, գժվար բառերի եք հանդի-
պում, նայեք բառարանին։ Յեթե ձեռքի տակ բառարան
չունեք, կարելի յէ մի թղթի վրա գրել բոլոր անձանոթ
բառերը և հետո նայել գրադարանի բառարանին։ Յեր-
բեմն գրքի մեջ պատճեռում եք անձանոթ անվան, պատ-
ճական գեղաքի, քաղաքի անվան և այլն։ Այդպիսի գեղ-
պում պիտի նայել հանրագիտական բառարանին. այն-
ուղ կդանեք և այդ պատճեռական անձնավորության կեն-
սողը բույսունը և ամեն տեսակի բացատրություն։

Վերջապես պատճեռ ե, վոր նախագասության
ամեն մի բառը հասկանալի յէ, բայց ամբողջ միտքը չեք
հասկանում։ Այդպիսի գեղքերում, պետք է կրկն ու
կրկն կարդալ, մտածել։ Յեթե վոչինչ չոգնեց, պիտի
գիտել պատրաստի ընկերոջ ինդերել վոր բացադրի։
Կարձ ասած, պիտի որենք բնդունել՝ «Մինչև շըմ-
բընես, առաջ մի անցիր»։

ԳԼՈՒԽ ՅՈՐԵՐՈՐԴ

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ, ԿՈՆՍՊԵԿՏՆԵՐ, ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ՝

§ 26. ԸՆՉՈՈՒ ՊԵՏՎ Ե ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ՅԵՎ
ԿՈՆՍՊԵԿՏՆԵՐ ԿԱԶՄԵԼ

— Երա համար, վորպիսզի իսկապես յուրացնենք
զուլդացածը, չիշենք գրքի բովանդակությունը։

Յերբ կոնսպեկտ է կազմվում, կամաւակամա խոր-
հում, մտածում ես Հեղինակի հիմնական մտքերի ու
գրությունների մասին։

Այն, ինչի վրա թուցիկ ընթերցանության
ժամանակ ուշը չես դարձնում, կոնսպեկտի վերածելիու-
թնքնարերություն վերհիշում և յուրացնում ես։ Կոնսպեկ-
տը քեզ սովորեցնում ե ամեն մի յերեւյթի ավելի կա-
տար բարեկարգություն։ Կոնսպեկտն է, վորի մի-
բառուն ու նշանակութիցը գտնել։ Կոնսպեկտն է, վորի մի-
ջոցով միշտ կարող ես կրկնել կարդացածդ։ Դա առանձ-
ջոցով միշտ կարող ես կրկնել կարդացածդ։ Դա առանձ-
ջոցով միշտ կարող ե, յերբ գիրքը քոնը չե՝ գրադարա-
նին և և այլն։

Ինչ վերաբերում է քաղվածքներին, պիտի ասել,
վոր քաղվածքները նույնպես չատ անհրաժեշտ են։ Սը-
վոր քաղվածքները նույնպես չատ ամենակարենը ե
բանց միջոցով պիտի արտագրել գրքի ամենալարենը և
հետաքրքիր տեղերը և ոգտագործել յերբ անհրաժեշտ
կլինի։ Նույնիսկ այն տեխնիքական աշխատանքը, վոր
կատարվում է գրքերից քաղվածքներ անելիս, նպաս-
կատարվում է կարդացածի լավ հիշելուն։ Փորձերը ցույց են
և տվել, վոր լավ և մի անգամ արտագրել, քան յերեք
անգամ բանավոր կրկնել։

Յեկ այդ պատճառով յուրաքանչյուր ինքնուս, զոր
վուք միայն կարգում, այլ ցանկանում և յուրացնել, հի-
շել, ո՞չառապես պետք է թուղթ ու գրչին գիմի—քաղ-
փոծ քներ ու կոնսոլեկտոներ կազմի:

§ 27. Ի՞նՉՊԵՍ ԿԱՏԱՐԵԼ ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

Ամեն մի ինքնազարդացմամբ պարապող պետք է
քաղվածքների առանձին տետրակ ունենա: Յենթաղթենք
գուք կարգում եք Բուխարինի «Կոմունիզմի այրութենք»
§ 1. Ի՞նչ է ծրագիրը: Պատասխան—«Այն նպատակները,
վորին ձգտում ե կուսակցությունն իր դասակարգի
շահերը պաշտպանելիս, կազմում են կուսակցության
ծրագիրը»: Այս դարձվածքը շատ կարեսր է, վորովհե-
տես սեղմ կերպով տալիս ե կուսակցության ծրագրի ընո-
րոշումը: Լավ կլինի, վոր արտադրեք: Վորակիսդի իմաց-
վի, վոր նա ամբողջովին Բուխարինից ե վերցրված, և
վոչթե ձեր ձեւակերպումն է, դարձվածքի սկզբում և վեր-
չում պիտի չակերտներ («») դնել և կողքին դրել, թէ
վորտեղից ե վերցրված: («Կոմունիզմի այրութենք»
Բուխարին և Պրիորուժենսկի § 1):

Ահա դուք կարգում եք Լենինի հայտնի գիրքը, «Զո-
նության յերեխայական հիվանդությունը կոմունիզմի
մեջ»: Այստեղ անմիջապես աշքի յեն ընկնում մի չարք
հրմնական մտքեր: Այսպիս, յերկրորդ դիմում Լենինը
հարց է տալիս. «Ի՞նչով ե պահպանվում պլուետարիա-
տի հեղափոխական կուսակցության դիսցիլինան,
ի՞նչով ե ստուգում, ի՞նչով ե ամրապնդվում»: Յեկ
իսկապես, վոր հիմնալի պատասխաններ ե տալիս.
«Առաջին, պլուետարական ավանդարդի գիտակցու-
թյամբ և նրա՝ հեղափոխությանը նվիրվածությամբ,
նրա գիմացկունությամբ, ինքնազոհությամբ, հերոսու-
թյամբ: Յերկրորդ, ամենալայն աշխատավորական
մասսաների, առաջին հերթին պլուետարիատի և նույն-

պես վոչ պլուետարական մասսաների հետ կապվելու,
մտերմանալու, յիթե կուզեք ձուլվելու կարողությամբ:
Յերրորդ, այդ ավանդարդի միջոցով իրազործվող քո-
ղաքական զեկավարության ճշտությամբ, նրա քաղա-
քական ստրատեգիայի և գործելակերպի ճշտությամբ,
այն պայմանով, վոր ամենալայն մասսաները սեփական
փորձերով համբգեն այդ ճշտության մեջ»:

Լենինի այս խոսքերը, անշուշտ պիտի արտագրել,
վարովհետեւ չրաշալիորեն ընորոշում են Կոմունիստա-
կան կուսակցության հիմունքները, հետեապես խորի
ուշագրության են արժանի:

Բացի այսպիսի կարեոր մտքերից, պիտի արտագրել
նաև կարեոր թվական տվյալները: Որինակ. «Կոմունիզ-
մի այրութենք» § 92-ում խոսվում ե Հոգեորականության
յեկամուտների մասին: Այդ ավայլները շատ ցանկալի յե-
տնենալ, վորովհետեւ զեկուցումների և վեճերի համար
միշտ պետք կտան:

Յեկ այսպես. պիտի արտագրել. 1) հեղինակի ա-
վելի կարեոր, հետաքրքիր, բնորոշ մտքերը, 2) թվական
և այլ փասստական տեղեկությունները: Հաճախ, քաղ-
փածքների բնույթը վորոշվում է, այն նպատակով, ինչ
իրեն առաջադրել ե ընթերցողը:

Ընդհանրապես, քաղվածքներն ինքնազարդացման,
ընթերցանության և բոլոր մտածողների ու մեծ
մարդկանց համար մեծ նշանակություն են ունեցել:
Հայտնի յե, ականավոր մարդկանց մոտ, մեծ քանակու-
թյամբ զանազան քաղվածքներ ու նկատողություններ են
դանդել:

§ 28. Ի՞նՉՊԵՍ ԿԱՂՄԵԼ ԿԱՆՍՊԵԿՏ

(Համառոտագրություն)

Կոնսոլեկտ կազմել, նշանակում ե, տալ վորեն հարցի
ուղմ բովանդակությունը: Դա կարելի յե անել յերկու

կերպ. 1) տալ գրքի բովանդակությունն ոգովելով հեղինակի բառերից ու արտահայտություններից և, 2) տալ բաժնեկությունը սեղչական բառերով:

Խոսենք որինակներով :

Յենթադրենք կոնսպեկտի եք վերածում Մ. Ն. Պակ-
րովսկու «Թուսաստանի պատմության հակիրճ ակնարկ»
գլուխքը, վոր սկսվում է հետեւյալ ներածությամբ. «Ընդ-
հանուր գաղափար պատմության մասին»:

Դուք սկսում եք ուշադրությամբ կարգալ կարգում
եք անընդհատ, չարունակում եք մինչ այն, յերբ նկատում
եք, վոր հեղինակը մի մտքից անցավ մի ուրիշին։ Կանգ
տուեք և մտածեք, ինչումն եք հեղինակի գլխավոր միտ-
քը, ինչ դարձվածքով կարելի յե արտահայտել այդ միտ-
քը։ Ինչպես ներածության առաջին, նույնպես և յերկ-
բորդ յերեսում, Պակրովսկին բացատրում է անցյալի
ուսումնասիրության անհրաժեշտությունը։ «Ինչու յե
մեզ անհրաժեշտ ուսումնասիրել անցյալը» հարցնում է նա
և ապա գալիս ե այս յեղբակացության։ «Իմանալ-նշանա-
կում ե նախատեսնել, իսկ նախատեսնել նշանակում ե կա-
րողանալ կամ տիրապետել։ Անցյալի իմանալը, այսպի-
սով, մեզ իշխանություն ե տալիս ապագայի վրա»։

Ահա այս հարցն ու պատասխանը տալիս են Հեղինակի հիմնական մտքերը—դրանք պիտի անպայման գրել:

Հեղինակի հետելալ միաբն այս և. «Դիտելով ներկայիս անցքերը կամ այն ինչ տեղի ունեցան համեմատարար վոչ ուշ, պատմական փոփոխությունների մեջ, մենք նկատում ենք ճշություն, այսինքն, վոր պատմությունը շարժվում է, վորոշ պարապմունքի մարդկանց միջոցով և փոփոխվում է, նայած այն բանին, թե հասարակության վոր գասակարգն է պատմությունը կատարում. այսինքն այս կամ այն հասարակական փոփոխություններն առաջնորդմ»:

Դրանից հետո, Պակրովսկին քննում է դաստկարգերի ծագման հարցը և այլն, ապա հայտարարում է. «Այսպիսով, բոլոր փոփոխությունների հիմքում ընկած են տրնտեսության մեջ կատարված փոփոխությունները՝ տրնտեսական փոփոխությունները»:

Բայց, «ինչն ե ստիպում մարդկանց տնտեսությամբ պարագել»։ Հարցնում է Պակրովսկին և իսկույն պատասխանում. «Մարդուն ստիպում ե աշխատել կարիքը, ինչպես առում են, նյութական պահանջները, սովոր ու զբախ իրեն փրկելու ձգուումը»։

«ՅԱՅԱՂԻՍՈՎ—ՀԱՐՈՒՆԱԿՈՎՄ և նա—մարդու ամբողջ գործունեյության և ամբողջ պատմության հիմքում ընկած են նյութական պահանջները։ Այսուեղից ել, պատմության այն բացատրությունը, վոր ներկայումս մենք տալիս ենք, կոչվում է պատմական մատերիալիզմ»։

«Պատմության մատերիալիստական բմբոնումը դապրոյետարական ընթացնումն ե»:

Յեղբափակման մեջ, Պակրովսկին խոսում է հաստ-
րակության վրա բնության կատարած ազդեցության
մասին:

Նա հետեւյալ յեղբակացություններն ե անում։ «Յեւ
այսպես, մարդը կախումն ունի բնությունից։ պատմու-
թյունը գանգաղ կամ արագ ե ընթանում, նայած թե այս
կամ այն ժողովուրդն ի՞նչ բնական պայմանների մէջ է
ապրում։ Բայց բնության այս տիրապետությունը մար-
դու վրա, անսահման չե։ Մարդը կարող է բնությանը
հաղթահարել, և անտեսության հիմքը բնությունը չե։

Բնությունը տնտեսության համար սրայն սյութ է։
Տնտեսության հիմքը, դա մարկային աշխատանքն է,
գորքան այդ աշխատանքը կատարելագործված է, այն-
քան նա ավելի համար է և կարող, այնքան ավելի քիչ կտ-
խում ունի մարդը բնությունից։ Յեվ դժվար չե յերեա-
կայել, զոր ապագայում, յերբ գիտությունն ու տեխնի-
կայել

կան կատարելագործման կհասնեն. իսկ ինչպիսի կոտորելագործման, մենք պատկերացնել չենք կարող, այն ժամանակ բնությունը մարդու ձեռքին կլինի ինչպես վափուկ մոմ, վորից մարդն ամեն ինչ, ինչ իրեն անհրաժեշտ է, կպատրաստի:

Այս մտքով և ավարտում Պավլովսկին իր ներածությունը:

Փորձենք կոնսպեկտի վերածել (Համառոտագրել)
Պակրովսկու մտքերը:

- 1 միաք Անցյալի ուսումնասիրությունն անհրաժեշտ է ապագան նախատեսնելու համար:
- 2 » Պատմությունը շարժողը դասակարգերի պայքարն է:
- 3 » Պատմական բոլոր փոփոխությունների հիմքում ընկած էն տնտեսական փոփոխությունները:
- 4 » Այս բոլոր դրություններն առաջացնում են պատմության մատերիալիստական ըմբռնումը կամ պատմական մատերիալիզմը:
- 5 » Պատմական մատերիալիզմը պրոլետարական քերիա յե:
- 6 » Մարդը կախում ունի բնությունից, բայց վորչափ շատ են զարգացած արտադրական ուժերը, այնին ավելի յե մարդու իշխանությունը բնության վրա:

Համառոտագրության (կոնսպեկտի) մի ուրիշ որինակ. վերցնենք էնինի գիրքը՝ «Զախություն յերեսական հիվանդությունը».

ԿՈՆՍՊԵԿՏԻ ԱՌԱՋԻՆ ՁԵՎԸ

Ն. Էնին. — «Զախության յերեխայական հիվանդությունը կոմունիզմի մեջ» (Հայերեն կտ).

Գլուխ 1. Ռուսական հեղափոխության միջազգային բընույթի մասին, ինչ իմաստով կարելի յե խոսել.

1. Ռուսական որինակը բոլոր յերկրներին վորեւրան սովորեցնում է. և դա ամենագլխավորն է, անխուսափելին, մոտ ապագայում կատարվելիքը:

2. Այստեղից ել առաջանում է խորհրդային իշխանության և բոլշևիզմի գործելակերպի միջազգային «համակությունը»:

3. Այս բանն եր, վոր չեյին ըմբռնում Յերկրորդ ինտերնացիոնալի «Հեղափոխական» զեկավարները, ինչպիսիք են՝ կառցելին Գերմանիայում, Ռուսո-Բառերնու Ֆրիդրիխ Ալբերն Ավստրիայում, վորոնք և դուրս յեկան հետադիմականներ (ռեակցիոններ), ամենավատ ոպորտյունիզմի և սոցիալ-դավաճանության պաշտպաններ:

Գլուխ 2. Բոլշևիկների հաջողությունների հիմնական պայմաններից մեկը.

1. Հաղթական պրոլետարիատի փորձը Ռուսաստանում, չոշափելի կերպով ցույց տվեց բոլորին, ով չերկարող մտածել կամ ով չերկարողացել խորհել այս հարցի մասին, վոր պրոլետարիատի կենտրոնացումն ու գիսցիպինան, բուրժուազիային հաղթանակելու հիմնական պայմաններից մեկն է:

2. Բոլշևիզմը գոյություն ունի իբրև քաղաքական հոսանք և քաղաքական կուսակցություն 1903 թվից: Միայն բոլշևիզմի պատմությունը կարող է բավարար կերպով պարզել, թե ինչու և ինչպես է կուսակցությունն ամենածանր պայմաններում ստեղծել պրոլետարիատի հաղթանակի համար անհրաժեշտ յերկաթե դիսցիլինուն:

3. Ի՞նչով ե պահպան պրոլետարիատի հեղափոխական կուսակցության դիսցիլինան, ի՞նչով ե ստուգվում, ի՞նչով ամբողջ վում:

Առաջին, պրոլետարական ավանդարդի գիտակցությամբ և նրա՝ հեղափոխությանը նվիրվածությամբ, նրա դիմացկունությամբ, ինքնազնհողությամբ, հերոսությամբ։

Յերկրորդ, ամենալայն աշխատավորական մասսաների՝ առաջի հերթին պրոլետարիատի և նույնպես վորովետարական մասսաների հետ՝ կապվելու, մտերմանալու, յեթե կուգեք, ձուլվելու ունակությամբ։

Յերրորդ, այդ ավանդարդի միջոցով իրագործվող քաղաքական դեկավարության ճշությամբ, նրա քաղաքական ստրատեգիայի և գործերակերպի ճշությամբ, այն պայմանով միայն, վոր ամենալայն մասսաները սեփական փորձով համոզվեն այդ ճշության մեջ։

4. Յեթե բոլշևիզմը 1917—1920 թվականների չոհանրված ծանր պայմաններում, կարողացավ մշակել և հաջող կերպով իրագործել՝ ամենախիստ կենարոնացումն ու յերկաթե դիսցիպլինան, դրա պատճառները չափարզ կերպով, կայանում են Ռուսաստանի մի շարք պատմական առանձնահատկությունների մեջ. այսպես ա) մի կողմից բոլշևիզմն առաջացավ 1903 թվին մարտսիզմի տեսության հաստատուն հիմքերի վրա, բ) մյուս կողմից, առաջանալով այդ տեսարանության գրանիտե հիմքերի վրա, բոլշևիզմն անցավ 15-ամյա (1903—1917 թ.) գործնական պատմության ուղին, վորն իր փորձի հարստության տեսակետից, նմանը չունի ամբողջ աշխարհում։

ԿՈՆՍՊԵԿՏԻ ՅԵՐԿՐՈՐԴԻ ԶԵՎԸ

Դրույթ 1. Ի՞նչ իմաստով կարելի յէ խոսել ուսական հեղափոխության միջազգային նշանակության մասին։

1. Ռուսական հեղափոխությունը, նրա հարուստությունը, միջազգային նշանակությունն ունեն։

2. Դրանով իսկ բնորոշվում է խորհրդային իշխության և բոլշևիզմի միջազգային նշանակությունը։

3. Յերկրորդ ինտերնացիոնալի գեկավարները բացարձակապես չեն հասկանում այս փաստը։

Դրույթ 2. Բոլշևիկների հաղթանակների հիմնական պայմաններից մեկը։

1. Ռուսական հեղափոխության փորձը ցույց տվեց պրոլետարական խիստ գիսցիպլինայի և կենարոնացման անհրաժեշտությունը։

2. Այդ գիսցիպլինան կանգուն ե՝ ա) պրոլետարիատի գիտակցությամբ և տոկունությամբ, բ) պրոլետարիատի ունակությամբ մոտենալ ամենալայն աշխատավորական մասսաներին, գ) քաղաքական դեկավարության ճշությամբ։

3. Այդ գիսցիպլինայի և կենարոնացման հաջող իրադրման պատճառը, չնայած քաղաքացիական կովի ծանր պայմաններին, կայանում է հետեւալում՝ ա) բոլշևիզմն առաջացավ հենարան ունենալու՝ հեղափոխական մարքսիզմի տեսությունը, բ) բոլշևիզմն ունի հեղափոխական գործնական աշխատանքի յերկարություն կերպ։

§ 29. ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԵԼԸ

Ինքնազարդացման մեջ մեծ գեր է խաղում զեկուցումներ կազմելը։ Ամեն մի, նույնիսկ վորքը զեկուցում, ինքնուրույն ստեղծագործական նվաճում ե։ Մենք մի քանի անգամ բնդգծեցինք, վոր ինքնազարդացման փորձում ամենաշատ ինքնուրույնության հայտնարկումը, հաջողության դիմավոր գրավակնն ե։

Կան ուսումնական հիմնարկներ, վարտեղ ամբողջ աշխատանքը դրված ե, նյութը զեկուցումների միջոցով ուսումնասիրելու հիման վրա։

(Որինակ, կարմիր պրոֆեսորների ինստիտում, Մոսկվա)։ Ուսունողը համապատասխան գրականություն

և կարգում, բեֆերատ և գլում և ընդհանուր ժողովում պաշտպանում ե իր գրածը: Ճիշտ այդպես ել կարելի յե ինքնազարդացման աշխատանքները դնել: Ինքնուսը կարող է, վորոշ հարցերի մասին գրավոր զեկուցումներ պատրաստել և յեթե հետաքրքիր լինեն՝ կարդա այս կամ այն խմբակում կամ ժողովում: Ինքնուսը յեթե նույնիսկ միայն իրեն համար գրի զեկուցում, դա մեծ ուզուա կտա իրեն: Զեկուցումը սիստեմի յե յենթարկում կտղմողի իմացածր, սովորեցնում է գրավոր կերպով արտահայտելիր մաքերը: Իսկ այս վերջինը մեծ դեր է խաղում խորհրդային իրականության մեջ, յերբ հազարավոր բանվորներ և գյուղացիներ քաշվում են ամեն առաջի հասարակական ու կուլտուրական շինարարության:

Ի՞նչպես գրել և կազմել զեկուցումներ:

Առաջ պետք է վորոշել զեկուցման նյութը: Այդ նյութն այն է, վորին նվիրված և լինելու զեկուցումը: Այդ նյութը շպիտի լինի շատ ցված, շպիտի շատ լայն բնույթ կրի:

Զպիտի նյութ վերցնել, այնպիսի մի լայն խնդիր, ինչպես որինակ «Մարքսիզմի եյությունը» կամ «Բանվարական շարժման պատմությունը» և այլն: Լավ ե այդ նյութը բաժանել մի շարք նեղ, կոնկրետ նյութերի: Այսպես, «Մարքսի ուսմունքը դասակարգային կովի մուխն», «Մարքսիզմի տնտեսական թեորիան» և այլն: «Բանվորական շարժման պատմության» փոխարեն վերցնել վորեե ըրջան, յենթադրենք «Բանվորական շարժումը Ռուսաստանում 90-ական թվականների վերջերին» և այլն:

Այս նյութերն իրենց հերթին կարելի յե ավելի փոքր հարցերի բաժանել: Վոչ թե «Մարքսիզմի տնտեսական ուսմունքը» այլ «Հավելյալ արժեքի թեորիան», վոչ թե «Դասակարգային կոիվ» վերցրու, այլ «Պրոլետարիատի պատմական գերը» և այլն: Յեկ այսպես, զեկուցումը

կտղմելուց առաջ, ճիշտ կերպով վորոշիր նյութը:

Յերկրորդ հարցը համապատասխան նյութերի ու սումնասիրությունն է: Պիտի մշակել մեկ կամ նույնիսկ մի շարք գրքեր, հավաքել մի շարք գրավոր ու բանավոր տեղեկություններ և ապա միայն սկսել այդ նյութերի մասին զեկուցում գրել:

Ամենից հարմարն է, զեկուցումը բաժանել յերեք մասի: 1) ներածություն, 2) բովանդակություն, 3) յեկ-բափակում:

«Եերածություն» կոչվում է զեկուցման այն մասը, վորտեղ պարզվում է, թե ինչն է ձեզ առիթ տվել այդ զեկուցումը կազմել, քննկող հարցերից վորոնք աղելի կորեոր նշանակություն ունեն:

«Բովանդակությունը» դա հենց ինքը զեկուցումն է ամբողջապես վերցրած: այսինքն ձեզ հետաքրքրող, նյութի մանրամասն քննությունը: Յեկ վերջապես «յեղ-բափակումը» այն մասն է, վորտեղ տրվում են այն յեղ-բափականությունները, վորոնց հանգել է զեկուցողը: Ամեն մի աշխատանքի՝ զեկուցման նայելով, գուք շատ հեշտությամբ կարող եք գտնել նրա հիշված յերեք մասերը:

Վերցնենք, շատ տարածված և հայտնի, ինկ: Ստալինի աշխատանքը: «Լենինի և Լենինիզմի մասին»: Սկզբում ներածությունն է:

«Լենինիզմի հիմունքները, մեծ նյութ ե: Վորպեսզի ամբողջովին ընդգրկենք, անհրաժեշտ են մի շարք գրքեր: Ուստի հասկանալի յե, վոր իմ դասախոսությունները լենինիզմի լրիվ բովանդակությունը չեն կարող տալ. Ամենալավ զեպքում, նրանք կարող են լինել լենինիզմի հիմունքների սեղմ կոնսպեկտը: Այսուամենայնիվ, յես անհրաժեշտ եմ համարում, այդ կոնսպեկտը տալ, վորպեսզի վորոշ հիմնական զեկավարող կետեր լինի լենինիզմի հետագա ուսումնասիրության համար»: Լենինիզմի բնորոշումը տալուց հետո, բնկ: Ստալինն անմիջապես

անցնում ե իր նյութի բովանդակությանը։ Նա խոսում է «լենինիզմի պատմական արժատների մասին», «մեթոդի», «տեսության», «ալրոլետարիատի գիկուտառայի», «դյուլացիական հարցի», «ազգային հարցի» և այլնի մասին։

Դրանքի վերջին գլուխը «յեղափակումն» է։

«Մուսական հեղափոխության թափն ամերիկյան գործնականության հետ միացնելու մեջ և կայանում լենինիզմի վողջ եյությունը, թե կուսակցական և թե պետական աշխատանքների շրջանում։ Միմիայն այսպիսի միացումը կտա մեզ լենինյան գործչի ամբողջացած տիպ և աշխատանքի լենինյան վոճակ։ Այս խոսքերով ե վերջացնում հեղինակն իր հայտնի գիրքը։

Ճիշտ այդպես, ինչպես Ստալինի մոտ, գրված են և մյուս աշխատությունները։ Այսպես ե կառուցվում, ամեն մի բանավոր յելույթ։ Խորհուրդ ենք տալիս, մի քանի գրքույկ և ճառեր վերլուծել, փորձել, ապա հետո միայն ինքնուրույն զեկուցումներ կազմել։

Ահա մի շարք կանոններ, վորոնցով ամեն մի զեկուցող պարտավոր ե զեկավարվել։

1) Պիտի ձգտել արտահայտվել, մաքսիմալ (ամենաշատ) չափով՝ հակիրձ, սեղմ, և միաժամանակ ձիչտուպարզ։

Սրան իբրև ամենալավ որինակ կարող և ծառայել բնկ։ Ստալինի գիրքը։ Նրանում ասված ե բոլոր կարեվորը, ինչ պիտի ասվեր—միաժամանակ չկա մի ավելորդ բառ։

Վերցնենք մեզ հայտնի «Կոմունիստական մանիթֆեստը»։ Կտեսնեք, վոր գրքույկում տրված և հասարակական զարգացման ամբողջ եյությունը, գիտական-կոմունիստական ուսուցման բոլոր հիմնական գծերը։ այս բոլորի հետ «Կոմունիստական մանիթֆեստը» փոքր գրքույկ է։ Յեկայապես, կարձ, հակիրձ լինելը, ամեն մի լավ զեկուցման առաջի պայմանն է։

2) Յերկրորդ պայմանը, վոր ամեն մի զեկուցող ինկատի պիտի ունենա, գտ ճշտությունն ե։ Ամեն մի նյութ, առանձնապես փաստական տեղեկությունները (թվեր և այլն) անհրաժեշտ ե մանրազննին կերպով ստուգել։ Զի կարելի, այս կամ այն աշխատությունից անդիք քաղվածքներ անել։ Իսկ յեթե քաղվածք են բերում, անպայման պիտի առես, վորտեղից ե (գիրք, յերես)։

3) Վոչ մի զեկուցում չպիտի կրի վերացական, չհիմնավորված բնույթ։

Յեթե վորոշ միտք ես արտահայտում, փաստերով հիմնավորիր ասածով։ Վերցնենք մի որինակ։ Պակրովակու «Մուսական կուլտուրայի պատմության ակնարկներ» գիրքը։ (այս 2-րդ հրատարակ. 144 յերես)։

Այդտեղ բերվում ե 1 ժամում, մեկ ձիու ուժի համեմատական արժեքը, նայած շարժիչ մեքենայի մեծությանը։

Այսպես՝

	1 ուժ	3 ուժ	6 ուժ
Շոգի . . .	15 կոպ.	9 կոպ.	7 ¹ ₂ կոպ.
Ելեքտրականութ. 23 »		18 ¹ ₂ »	—
Գազ . . .	12 »	8 ¹ ₂ »	7 ¹ ₂ »
Կավթ . . .	30 »	14 »	11 »

Այս թվերն ապացուցում են, վոր «մեքանան այնքան ե տնաեսում, վորքան նա մեծ ե»։ Յերբ մարքսիստները վիճում եյին նարողնիկների հետ, մուսատանի տնաեսական զարգացման ուղիների մասին, մարքսիստները միշտ իրենց ասածները հաստատում եյին, յերկաթե փաստերի ու թվերի կենդանի լեզվով։

Վերցըք ընկ. Լենինի «Կապիտալիզմի զարգացումը մուսատանում» աշխատությունը։ Զկա մի վորեւ չնչին յեղակացություն իսկ, վոր չհիմնավորվի փաստերով։

Ամեն մի աշխատավթյուն հենց նրանով և գնահատելի, վորքան քիչ դատարկ ձառեր ու ֆրազներ և պարունակում:

Ահա այն յերեք «պատգամները», վորոնք որբությամբ պիտի կատարի յուրաքանչյուր ինքնուս, վոր զեկուցում է կազմում:

ԳԼՈՒԽ ՈՒԹՅԵՐՈՐԴ

ԻՆՔՆԱԶԱՐԴԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԻՆՔՆԱԶԱՐԴԳՈՅՆԱՆ ՄԵԶ

§ 30. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԻՆՔՆԱԶԱՐԴԳՈՅՆԱՆ ՄԵԶ

Հանձարեղ մտածող Գ. Վ. Պեխանովն ասել է. «Ճամփարվեստական արտադրություններ, լուս միայն արտացոլում են կյանքը, այլ նույնպես բացատրում են. գրահամար ելնրանք մեզ համար կյանքի դասագիրք են»:

Ահա այս «կյանքի դասագիրք» լինելը բնորոշում է գեղարվեստական գրականության նշանակությունն ինքնազարգացման համար. Գեղարվեստական գրականության ընթերցանության միջոցով թափանցում ենք կյանքի այնպիսի շրջաններ, վոր այլ ձանապարհով համարյանձնարկին ե: Ձանաչում ենք մեզ անձանոթ յերկրների կյանքը, թափանցում ենք հնագույն ժամանակների խորքը, ձանոթանում ենք մեզ բոլորովին ոտար մարդկանց զգացմունքներին ու ապրումներին:

Ահա դուք կարգում եք Սինկլերին և ծանոթանում ամերիկյան միլիարդատիրոջ կենցաղին. թե ինչպես են անցկացնում սրանք իրենց հաճույքը, ինչպես և սրանց ընտանեկան հարաբերությունները և այլն:

Սա շատ կարեոր է: Մենք գիտենք, վոր հակառակորդին ձանաչելը, վորուշափով, հաղթանակի գրավութան է:

Յուրաքանչյուր բանվորի հայտնի յէ, վոր «բանվորի և գյուղացու շաղկապի» ամբազնդումը խորհրդային պե-

տության տմբենակարեռը նպատակներից մեկն եւ : Կաղ-
մակերպվում են ամեն տեսակի կուլտ-շեֆություններ,
հրատարակվում եւ բազմաթիվ հանրամատչելի գիտական
գրականություն, գումարվում են անթիվ ժողովներ ու
կոնֆերանսներ և այլն :

Վորպեսզի իսկապես բարելավենք քաղաքի և գյուղի-
միությունը, քաղաքը պիտի գյուղին ձանաչի . իսկ գյու-
ղը՝ քաղաքին : Այս դեպքում նույնպես գեղարվեստական
գրականությունը հսկայական ոգուած կտա : Գրականու-
թյան միջոցով քաղաքի բանվորները կծանոթանան գյու-
ղական կենցաղին, գյուղի սոցիալական զանազան խրծ-
բավորումներին, գյուղացիության արամագրությանն
ու ապրումներին :

Գյուղացիներն իրենց հերթին, տեղեկություններ
կունենան քաղաքի կյանքի, Փաբրիկ-գործարանային
արտադրության մասին :

Կամ յեթե մենք վերցնենք, պատմական տեսակի վե-
պերն ու պատմվածքները. ասենք Տոլստոյի «Հանճարեղ»
«Պատերազմ և խաղաղություն» վեպը, կտեսնեք, վոր
դա բաց ե անում մեր առաջ նապոլեոնյան պատերազմ-
ների պարզ պատկերը : Կարծես թե, մենք կենդանի գի-
տողներ և նույնիսկ մասնակիցներ ենք դառնում, վաղուց
անցած դեպքերի :

Իսկ վորքան շատ բան է տալիս, գեղարվեստական
գրականությունը, զանազան տեսակի մարդկային բնու-
վորություններ և ապրումներ ձանաշելու տեսակետից :

Ի՞նչ է զգում մարդը, յերբ նրան կախելու յեն տա-
նում, ի՞նչ մտքեր են ծագում, խեղդվող մարդու գլխում.
և այլն : Այս բոլորը շատ հետաքրքիր խնդիրներ են, վո-
րոնք գեղարվեստական գրականության մեջ զանազան
արտահայտություններ են գտնում :

Այսպիսով տեսնում ենք, վոր գեղարվեստական գր-
րականությունը կյանքը ձանաշելու հզոր միջոց եւ գրո-
կանության ընթերցումն ինքնուսի պարագմունքներում
չպիտի վերջին տեղը բռնի :

§ 31. Ի՞ՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես գիտական և ամեն տեսակի գրականության
քառային ընթերցանությունը վոչինչ չի տալիս, այն-
պես ել գեղարվեստական գրականության անսիստեմ ըն-
թերցումը բոլորովին անթույլատրելի յե :

Միտեմա, կարգ, ծրագիր, ահա թե ինչ ամենից տ-
ուած պիտի ի նկատի ունենալ:

Գեղարվեստական գրականության ուսումնասիրու-
թյան յերկու ձանապարհ կա. 1) պատմական կարգ,
2) ըստ նյութերի, այսինքն ինչպես գիտական նյութերի
յուսաբանում, (իլլյուստրացիա) : Առաջին միջոցը,
պատմական կարգը, կայանում են նրանում, վոր հեղինակ-
ներին ժամանակադրական կարգով ուսումնասիրում են :
Դրա համար պիտի վերցնել գրականության պատմու-
թյան դիրք, յենթագրենք Պ. Ս. Կողան («Ռւբիկովի կամ-
պեմա-Յելլըրոպական գրականության պատմության»)
մի շարք հեղինակների գլխավոր յերկերի ցուցակ կազմել
և կարգալ : Պիտի կարգալ ամեն մի հեղինակին բնութա-
գծող աշխատությունները, կամ կարգալ ըստ գրական
ուղղությունների : Այդ գրքերի ընթերցումից հետո, պի-
տի կարգալ նրանց մասին յեղած քննադատական և կի-
սողը գրական գրականությունը :

Ասացինք, վոր յերկրորդ միջոցը գրականության
ուսումնասիրության այն ձևն եւ, յերբ կարգում ենք գի-
տական հարցերը յուսաբաներու, իլլյուստրացիայի հո-
մար :

Այսպես. յենթագրենք կուրդում՝ եք Լենինի գիրքը. «Իմպերիալիզմն ինչպես կապիտալիզմի նորագույն ետապ»: Այս գիրքը մանրամասն ուսումնասութելուց հետո, պիտի դիմեք այն գեղարվեստական գրականության, վորը տալիս ե իմպերիալիզմի լծի տակ տնքացող այս կամ այն յերկրի կյանքը: Այդպիսի գրվածքներ են՝ Սինկլիրի, Ռույլի, Վերհարնի և ուրիշների աշխատութունները*):

Յեթե կարգացել եք, գասակարգային կովի մասին, նույն այդ Ն. Պոլյակի գրացուցակը տալիս ե գեղարվեստական գրվածքների մի յերկար շարան՝ Մաքսիմ Գորկուց, Բրուսյանինից, Բիբինից, Պլետնեից, Անդրեյեվիչ, Հառապտմանից, Զոլայից, Միրբոյից և այլն: Ճիշտ այս ձեռվ, ամեն մի գիտական նյութի մասին կարելի յե գտնել համապատասխան գրական-գեղարվեստական նյութեր: Այս ձեկի ընթերցանությունը կրկնակի ու գուտ ե տալիս ընթերցողին. 1) նպաստում ե նրա ընդհանուր պատրաստության բարձրացմանը և, 2) ընթերցողին պատճառում ե մի շարք գեղարվեստական բագականություններ և ապրումներ:

§ 32. ԻՆՉՊԵՍ ՎԵՐԼՈՒԽԵԼ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՑԱ- ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վորագեսզի գեղարվեստական գրականությունն ընթերցողին առ շատ թե քիչ զիտելիքներ, անհրաժեշտ ե քննորեն վերաբերվել ամեն մի գեղարվեստական գրվածքի: Հակառակ դեպքում ոգտի փոխարեն վնաս դռւրս կդա: Ամեն մի բանվոր և զյուղացի ընթերցող լավ ողետք ե իմանա, վոր գեղարվեստական գրվածքների 99 տոկոսը արդյունք և վոչ պրոլետարական ստեղծագործության:

*.) Ն. Պոլյակն ունի կազմած հատուկ տեղեկատու «Սոցիալական թեմաների մասին գեղարվեստական գրականության—գրացուցակ»:

Վերցրեք ամբողջ նախահեղափոխական գրականությունը. չեք վիճի, վոր քննադատորեն պիտի կարգալ: Քննադատորեն պիտի մոտենալ նույնպես հեղափոխության շրջանի և մեր որերի շատ գրվածքների: Այս քննադատական մոտեցումը հետեւյալ կերպ կարելի յե ձեւակերպել. չեք կարելի հարած յուղի տեղ ընդունել այս կամ այն հեղինակի գատողությունները, այլ պիտի համեմատել, քննադատորեն պարզել, թե պրոլետարական աշխարհահայցքի հիմքերին չեն հակառակ:

Գեղարվեստական գիրքը կարգալուց հետո, այն վերլուծել, այսինքն պարզել՝ այն հարցերը, վոր գրել ե հեղինակը, լուծո՞ւմ ե տվել այդ հարցին, յեթե վոչ ինչո՞ւմ են նրա սիսալները, ի՞նչ ժամանակաշրջանը ու կենցաղ ե նկարագրում հեղինակը և վո՞րքան ճշգրիտ ե տալիս ամեն ինչ (որինակ պատմական վեպը կարելի յե համեմատել տվյալ ժամանակաշրջանը նկարագրող գիտական գրվածքի հետ). ի՞նչ տիպեր ե նկարագրել հեղինակը, ի՞նչումն են այդ տիպերի թերությունները, և այլն և այլն:

Այս բոլոր հարցերին պիտի տալ շատ մտածված պատասխան:

Միաժամանակ անհրաժեշտ ե մշտապես դիմել քննադատական գրվածքների և նրանց դիտողությունները համեմատել այն յեղբակացությունների հետ, վորոնց հանդել ե ընթերցողն ինքնուրույն գատողությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ

1. Գրքեր շատ կան, կյանիքը շատ կարճ է, կարդա՞մ իայն լավ գրքեր, քեզ պետքական և ոգտակար գրքեր:
 2. Ուշադրությամբ ընտրիր կարդալուդ գրքերը, խորհուրդ հարցրու իմացողներից, ոգտվիր զրախոսական ցուցակներից, կարդա՞մ քննադատականներ:
 3. Յեթե վերցրածդ գիրքը դժվար և անհասկանալի յէ, հետ դիր, մի՞ կարդա, փնտրիր նորը, քեզ մատչելին:
 4. Ընթերցանության ժամանակ մի՞ շուայիր. լավ է մի գիրք կարդալ, ինչպես պետք է յուրացնել, բան տասը, բայց չյուրացնել. լավ է քիչ յուրացնել, բայց հաստատուն, մշտապես:
 5. Հիշողությանդ վրա հույս չդնե՞ս, ունեցիր տեսրակ և համառոտ կերպով գրիր կարդացածդ:
 6. Ոգտակար գրքերը նորից կարդա՞մ, վերանայի՞ր:
 7. Կարդացածդ պատմի՞ր ուրիշներին, դա կամրապնդ գիտելիքներդ:
 8. Կարդացածդ գրքերի տվածը սոուզի՞ր կյանքում:
 9. Թեկուզ մի ժամ, բայց ամեն որ, կանոնավո՞ր կարդա:
 10. Ազմուկը յանգարում է ընթերցանությանը, սաեղծի՞ր խաղաղ հարմարություններ:
-

1. Ինչ է ինքնազարգացումը	5
2. Ինքնազարգացման հիմքը—աշխարհայացքի մը-շակումն է	8
3. Լենինիզմի ուսումնասիրությունը, ինքնազար-գացման ամենահիմնական խնդիրն է	12
4. Ինքնազարգացում և գործնական աշխատանք	14
5. Ինքնազարգացմամբ պարապելն ամենամեծ բա-վականությունն է	16

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԻՆՔՆԱԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

6. Անհատական և կոլլեկտիվ աշխատանք	18
7. Ի՞նչպես պիտի աշխատի մենակ պարապողը	20
8. Ինքնազարգացման խմբակներ	21
9. Ինքնազարգացման համադրած մեթոդը	22
10. Բացակայությամբ սովորելը	23

ՅԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԻՆՔՆԱԶԱՐԳ. ԽՄԲԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ	
11. Վորտեղ և ի՞նչպես կազմակերպել ինքնազար-գացման խմբակներ	25
12. Խմբակի կազմը	26
13. Խմբակի բարտուղարը	27
14. Խմբակի արձանագրություններ	27

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԻՆՔՆԱԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔԸ ԾՐԱԳՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆ Ե	
15. Ծրագրային աշխատանիքի անհրաժեշտությունը	30
16. Ժամանակի ոգտագործման հարցը	30
17. Պարապմունքների ծրագիրը	32
18. Պարապմունքների հուշատետը	34

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ԳԻՐՔԸ

19. Դրախոսական ցուցակներ	36
20. Պարբերական մամուլը և գրախոսություններ	37

ՎԵՅՏԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԳԻՐՔԸ

21. Ի՞նչ է նշանակում «գիրք կարդալ իմանալ» .	38
22. Ինչպես տիրապետել «կարդալու արվեստին» .	39
23. Առանձին մոտեցում պիտի ունենալ յուրաքանչյուր գրքին .	40
24. Ինչի՞ համար եմ կարդում այս գիրքը .	41
25. Դժվար տեղերի վերլուծություններ .	42

ՅՈԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՔԱՂՎԱՄՔՆԵՐ, ԿՈՆՍՊԵԿՏՆԵՐ, ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

26. Ինչու պիտի ե բաղվածքներ և կոնսպեկտներ կազմել .	43
27. Ինչպես կատարել բաղվածքներ .	44
28. Ինչպես կազմել կոնսպեկտ (համառոտագրություն) .	50
29. Զեկուցումներ կազմելը .	51

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԻՆՔՆԱԶԱՐԴԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԳԵՂՄՐՎԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

30. Գեղարվեստական գրականության դերն ինքնազարգացման մեջ .	57
31. Ինչպես կարդալ գեղարվեստական գրականություններ .	59
32. Ինչպես վերլուծել գեղարվեստական արտադրությունները .	60



21. «Կանոնադրություն գործարկումներին և տեղկումներին կից կուլտ-հանձնաժողովների» . 5

22. «Որինակելի կանոնադրություն բանակումբի, կարմիր անկյան և ֆիզ-կուլտի խորակի» . 5

23. Սենյուռեկին. — «Ակումբային աշխատանքների խընդիրներ» . 30

24. Լ. Ա. Կ. ո. — «Գողերը» . 5

25. «Առաջին կարմիր զբոշը» . 10

26. Սպերանսկի. — «Տուբերկուլոզը» . 10

27. «Յելիր պայքարի, ստրուկ գաղութի», (ինսցենիր).

28. «Փոխոգնության գանձարկղների կազմակերպման կարգը» . 10

29. Վ. Ա. Ֆ. ի. 6. — «Ռուսաստանի արհշարժման 20 տարին» . 50

30. «Պրոֆմիությունը և նրա անդամները» .

31. Ռոզենֆելդ. — «Ինչու և ինչպես պետք ե ռասումնասիրել արհշարժումը» . 20

32. «Բանվորական առաջին միավորումները կապիտալիզմի արշալուսին» . 20

33. «Ի՞նչպես առաջացան և ինչպես ելին աշխատում առաջին արհմիությունները» . 70

34. «Արհեստակց. շարժումը մինչև 1914 թ.» . 30

35. «Արհեստակցական շարժումը համաշխարհային պատերազմից հետո» . 30

36. «Արհեստակցական շարժումը Ռուսաստանում (1905 – 25 թ.)» . 80

37. «Ի՞նչ ե արհեստակցական արտադրական միությունը: Արհմիությունը և կուսակցությունը» .

38. «Ամստերդամ և Մոսկվա» .

39. «Ի՞նչ ե պրոֆմիության կանոնադրությունը» .

40. «Ի՞նչ ե տալիս հավաքական պայմանագիրը» .

41. «Ի՞նչ ե տալիս բանվ. աշխատանքի որենսգիրը» .

42. «Ի՞նչ ե սոցիալական ազանովազրությունը» .

43. «Աշխատանքները բանակումբում» .

44. «Պրոֆաշխատանքները գյուղում» .

45. «Պրոֆգրագիտության դասագիրք» .

46. Հնչպես են կառուցված մեր արհմիությունների ՀՀ Ազգային գրադարան

47. Լ. Արհմիությունների 4-րդ համագուման

48. Գնահատու կոնֆլիկտային հանձնաժողովների

49. Պրոֆշարժման գործնականը

50. Ինքնազարգացման ուղեցույց



NL0054792

ԳԻՆԸ 70 ԿՌՊ.